

# ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

## ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻԻ 1-12

ՅՈՒՆՈՒԱՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՃԺԴ. ՏԱՐԻ 2000

«ՊԻՏՈՅԻՑ ԳԻՐՔԸ»՝ ՔՐԻՍՏՈՆԷԱՑՈՒԱԾ ԾԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ  
ՁԵՌՆԱՐԿ ԵՒ ԱՆՏԻԿ ԳՐԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԸ ՆՐԱՆՈՒՄ

Գոհար Մուրադեան

«Պիտոյից գրքի» քննական հրատարակութեան առաջաբանում ու ծանօթագրութիւններում մենք փորձել ենք մատնացոյց անել այդ կիսաթարգմանական ճարտասանական ձեռնարկի նախորինակը՝ 4-րդ դարի վերջի յոյն ճարտասան Աֆթոնիոս Անտիոքացու նախակրթութիւնների նախնական՝ չպահպանուած տարբերակը, որի տեսական հատուածները թարգմանուել են հայերէն, իսկ բուն վարժութիւնների մի մասը, որոշակի փոփոխութիւններով, վերապատմուել. սակայն հայ հեղինակը ոչ միայն թարգմանել ու ընդօրինակել է, այլեւ յունարէն նախորինակից անկախ թեմաներով նախակրթութիւններ յորինել ու գետեղել իր ժողովածուի մէջ:

Այս դրոյթներն ամփոփուած են նաեւ «Պիտոյից գրքի» մեր ռուսերէն թարգմանութեան առաջաբանում:

Նշուած «աղբիւրագիտական» խնդիրները պարզաբանելուց յետոյ (որքան որ թոյլ են տալիս առկայ աղբիւրները), անհրաժեշտ ենք համարում աւելի մանրամասն ուսումնասիրել հայկական ճարտասանական ձեռնարկի եւ նրա յունական

նախօրինակի նախակրթութիւնների թեմաները, փորձել հասկանալ, թէ ինչ սկզբունքներով է առաջնորդուել հայ ընդօրինակողն իր նախօրինակից թեմաներ ընտրելիս, ինչու եւ ինչպէս է քրիստոնէացրել իր ձեռնարկը: Պիտի փորձենք նաեւ ուրուագծել «Պիտոյից գրքում» առկայ անտիկ թեմաներից իւրաքանչիւրի անցած ուղին եւ բացատրել հայկական տարբերակներում վկայուած, իսկ նախօրինակում բացակայող տեղեկութիւնների ծագումը:

Հայ միջնադարեան գրականութիւնն իր կազմաւորման եւ զարգացման զգալի ժամանակահատուածում կրել է բիւզանդական գրականութեան հզօր ազդեցութիւնը: Բիւզանդական մշակոյթն, իր հերթին, մի կողմից արեւելեան քրիստոնէութեան առաջատար ուժն էր, սակայն միւս կողմից ամբողջովին չմերժեց դասական հարուստ ժառանգութիւնը: Յիշենք թեկուզ այն փաստը, որ անտիկ հեղինակների ստեղծագործութիւնները մեզ են հասել շնորհիւ միջնադարեան վանական գրիչների ջանքերի:

Լ. Ֆրեյբերգը Գրիգոր Նազիանզացու ճառերում Հոմերոսի պոեմների այլաբանական մեկնաբանութեան առիթով գրում է. «Չնայած յունական դիցաբանութեանը յատուկ որոշ գծերի, որոնք չէին կարող ընդունուել եկեղեցու կողմից, քրիստոնէական մշակոյթը դիմում էր յունական առասպելներին որպէս գեղարուեստական միջոցների շտեմարանի եւ նոյնիսկ բարոյախօսութեան աղբիւրի»<sup>1</sup>:

Եւ բնական է, որ յունական ազդեցութիւնը հայ գրականութիւն ներմուծեց ոչ միայն ընդհանրական եկեղեցու հիմնական դաւանաբանական հասկացութիւնները, արեւելաքրիստոնէական գրական ժանրերն ու տեսակները, եկեղեցու հայրերի գրուածքները, այլեւ, ճիշտ է, ոչ համակարգուած, բայց որոշակի ծանօթութիւն այնպիսի անունների հետ, ինչպիսիք են Պլատոնը, Արիստոտելը, Հոմերոսը, Պիլթագորասը, Եւրիպիդէսը, Սոկրատէսը, Դեմոսթենէսը եւ անտիկ գրականութեան ուրիշ կարկառուն դէմքեր:

Դասական աւանդոյթները միջնադարում պահպանել եւ փոխանցել է գլորցը: Արեւմտաքրիստոնեական մշակոյթի համեմատ բիւզանդական մշակոյթն աւելի պահպանողական էր, եւ այդ պահպանողականութիւնն ու հին աւանդոյթների շարունակականութիւնն ապահովում էր ուշ անտիկ դարաշրջանում կանոնականացուած կրթական համակարգը, քերականական ու ճարտասանական գլորցները, որոնցում կարգում եւ մեկնաբանում էին Հոմերոսի պոեմները, Պլատոնի տրամախօսութիւնները, Դեմոսթենէսի, Էսքլինէսի եւ Իսոկրատէսի, իսկ աւելի ուշ՝ նաեւ Էլիոս Արիստիդէսի, Լիբանիոսի եւ Թեմիստիոսի ճառերը: Այս, իհարկէ, ամենակարեւոր նորամուծութեան՝ Աստուածաշնչի եւ Եկեղեցու հայրերի ուսումնասիրութեան համատեքստում<sup>2</sup>:

Ճարտասանական կրթութիւնը շատ կարեւոր դեր է խաղացել բիւզանդացիների կեանքում. մի կողմից այն եղել է պետական պաշտօններ զբաղեցնելու անհրաժեշտ պայման<sup>3</sup>, միւս կողմից՝ նպաստել անտիկ գրական աւանդոյթների փոխանցմանը: Այսպէս, կապագովկացի հայրեր Գրիգոր Նիւսացին եւ Բարսեղ Կեսարացին մինչեւ եկեղեցական գործունէութեանը դիմելն զբաղուել են ճարտասանութեամբ, եւ այդ հանգամանքը մեծ ազդեցութիւն է թողել նրանց ստեղծագործութեան վրայ: Այդ առումով յատկանշական է, որ վաղ քրիստոնեայ հեղինակների արտայայտած մտքերն այն մասին, թէ քրիստոնէական բովանդակութիւն արտայայտելու համար ճարտասանական արուեստն աւելորդ է, գտնում ենք նրանց՝ ճարտասանական արուեստի բոլոր կանոններով շարադրուած գործերում<sup>4</sup>:

Բիւզանդական գլորցներում ուսուցանուող «եռեակ գիտութիւնները» (trivium<sup>5</sup> - քերականութիւն, ճարտասանութիւն, տրամաբանութիւն) հիմնական դասագրքերն արդէն 5-րդ դարի երկրորդ կէսին սկսեցին հայերէնի վերածել յունաբան գլորցի ներկայացուցիչները<sup>6</sup>: Եւ բնական է, որ հիմնական քերականական ձեւաբանութիւնից յետոյ հերթը հասաւ Աֆթոնիոս Անտիոքացու նախակրթութիւններին (Progymnasmata, 4-րդ դ. երկրորդ կէս): Դա մի ժողովածու է, որ պարունակում է տասնչորս տիպի ճառ կամ գրական շարադրանք կազմելու համառօտ հրահանգներ՝ մէկական վարժութեամբ իւրաքանչիւրի համար<sup>7</sup>: Նոյն հեղինակի գրչին են պատկանում նաեւ Նիկողայոս Միւռացու անունով պահպանուած շուրջ հարիւր նախակրթութիւնները<sup>8</sup> եւ երեսունից աւելի նախակրթութիւն Լիբանիոսի ժողովածուի մէջ<sup>9</sup>: Աֆթոնիոսի նախակր-

թութիւնները ձեռագրերում սովորաբար նախորդում են Դեմոսթենէսի կրքոտ երկրպագու Հերմոգենէս Տարսոնացու (2-րդ դար) տրակտատներին, որոնք բիւզանդական դպրոցում ճարտասանական կրթութեան տեսական հիմքն են կազմել: Այդ ճարտասանական կորպուսը կազմուել է հաւանաբար 5-րդ դարի վերջին<sup>10</sup>:

Աֆթոնիոսի նախակրթութիւնների (այսուհետեւ դրանց թւում դիտարկելու ենք նաեւ Նիկողայոսին եւ Լիբանիոսին վերագրուածները) մեծ մասի թեմաներն առնչուում են անտիկ առասպելական, գրական սիւժեների, հերոսների, իմաստունների կամ նշանաւոր գործիչների ասոյթների, դասական շրջանում յայտնի անձանց կամ վայրերի հետ: Թուարկենք միայն նրա ժողովածուի մէջ պահպանուած նախակրթութիւնների<sup>11</sup> վերնագրերը. «Առակ մըջիւնների եւ ճպուռների մասին» (էջ 60, առակներն ընդհանրապէս բնորոշում են որպէս «եզովպոսեան»), «Պատմութիւն վարդի մասին» (էջ 61, պատմում է Ափրոդիտէի ու Ադոնիսի սիրոյ եւ Արէսի խանդի մասին առասպելը), «Բանական պէտք. Իսոկրատէսն ասում էր, որ ուսման արմատը դառն է, իսկ պտուղը՝ քաղցր» (էջ 63), «Յորդորական խրատ. Պէտք է աղքատութիւնից փախչել, ով Կիրոս, եւ բարձր ժայռերից մեծ ծովը նետուել»<sup>12</sup> (էջ 68, Թէոֆիսի խրատական երկտողերից մէկն է), «Եղծումն, թէ ինչն է անհաւանական» (էջ 72), Դափնէի մասին առասպելում» (էջ 72), «Հաստատում, թէ ինչն է հաւանական Դափնէի մասին առասպելում» (էջ 77), «Ընդհանուր տեղի բռնակալի դէմ» (էջ 82), «Թուկիդիդէսի ներբողեան» (էջ 86), «Իմաստութեան ներբողեան» (էջ 90, միակ տեսակն է, որի լուսաբանման համար երկու նախակրթութիւն է պահպան-

նուել), «Փիլիպպոսի պարսաւ» (էջ 93), «Աքիլլեսի եւ Հեկտորի բաղդատութիւն» (էջ 98), «Բարաոնութիւն. ի՞նչ խօսքեր կ'ասեր Նիոբէն, երբ նրա զաւակները սպանուեցին» (էջ 102), «Ալեքսանդրիայի ակրոպոլիսի նկարագրութիւնը» (էջ 104), «Դրութիւն. Պէ՞տք է արդեօք ամուսնանալ»<sup>13</sup> (էջ 109), «Օրէնքի առաջարկ. Յակաճառութիւն շնացողին յանցանքի վայրում սպանել հրամայող օրէնքին» (էջ 115):

Նոյն պատկերն ենք ստանում ուսումնասիրելով Նիկողայոսի եւ Լիբանիոսի ժողովածուները<sup>14</sup>. անտիկ առասպելների թեմաներով են գրուած բոլոր «պատմութիւնները», «եղծումները» եւ «ստեղծումները», «բարաոնութիւնների» մեծ մասը, բոլոր «պէտքերն» ու «խրատներն» անտիկ հեղինակութիւնների ասոյթների քննարկումն են, «ներբողեանների», «պարսաւների», «բաղդատութիւնների» եւ «նկարագրութիւնների» շարքում զգալի թուով նախակրթութիւններ նուիրուած են անտիկ առասպելական ու պատմական անձանց (նկարագրութիւնները վերաբերում են նրանց արձաններին):

Մնացած թեմաներն ընհանուր են, յամենայն դէպս, առանց կոնկրետ պատմական կամ մշակութային միջավայրի պատկերման: Դրանք նուիրուած են բոյսերի (օր. Նիկ. IX.7 «Կաղնու պարսաւ», X.9 «Զիթենու եւ խաղողի որթի բաղդատութիւն»), կենդանիների (Նիկ. VIII.3 «Ճլի ներբողեան», IX.5 «Առիւծի պարսաւ»), տարուայ եղանակների (Նիկ. VIII.5 «Զմռան ներբողեան», IX.2 «Աշնան պարսաւ»), մարդկանց զբաղմունքների (Լիբ. XII.1 «Հետեւակամարտութեան նկարագրութիւն», XIII.2 «Դրութիւն. արդեօք արժէ նաւարկել»), բնաբանութեան գծերի (Նիկ. X.4 «Երկչոտութեան եւ ծուլութեան բաղդատութիւն»), այս կամ այն յատկա-



506-2015

նիշը մարմնաւորող մարդկային տիպերի (Նիկ. VII.2 «Ընդհանուր տեղի ծոյլի մասին»):

Ճարտասանական նախակրթութիւնների այսպիսի «դասական», «անտիկ» դիմադիժը բնորոշ էր ողջ կրթական համակարգի համար: «Դասական կրթութեան եւ քրիստոնէութեան միջեւ միշտ որոշակիորէն լարուած յարաբերութիւններ են եղել»<sup>15</sup>, եւ այդ է պատճառը, որ բիւզանդական դպրոցում զուտ քրիստոնէական թեմաները շատ ուշ են ճարտասանական վարժութիւնների թեմայ դարձել: Այսպէս, Աֆթոնիոսը բազմաթիւ ընդօրինակողներ ու մեկնաբաններ է ունեցել, որոնք ընդհուպ մինչեւ 10-րդ դար ոչ մի քրիստոնէական թեմա չեն յիշատակել: Այդպէս է վարուել նոյնիսկ Սարգիսի եպիսկոպոս Յովհաննէսը, 9-րդ դարի վերջին, չնայած իր եպիսկոպոսական կոչմանը եւ երկու սրբախօսական գրուածքի հեղինակ լինելու հանգամանքին: Ի դէպ, նա ամփոփել է իրեն նախորդող մեկնութիւնները եւ այսպիսով հիմնական գծերով արտայայտել իր ժամանակի ճարտասանական գիտելիքների մակարդակը, հետեւաբար նրա աղբիւրներն էլ պէտք է նոյն բաժանումը դրսեւորած լինէին: Առաջին հեղինակը, որ նախակրթութիւններ է գրել քրիստոնէական թեմաներով, Յովհաննէս Գէոմետրոսն էր 10-րդ դարում<sup>16</sup>: Ճիշտ է, Գ. Կուստասի կարծիքով, քրիստոնէական թեմաների արծարծումը դասարանում կարող էր աւելի վաղ սկսուած լինել, սակայն դրանց ընդգրկումը դասագրքերի մէջ տեղի ունեցաւ միայն 10-րդ դարում<sup>17</sup>:

Այդպիսին էր պատկերը յունական միջավայրում: Հայկական իրականութիւնը որոշակիորէն տարբեր էր: «Պիտոյից գիրքը»<sup>18</sup>, որի տեսական հատուածները ճշգրիտ թարգմանութիւն են Աֆթոնիո-

սից, իսկ նախակրթութիւնները, այսինքն նմոյշ-օրինակները՝ ինքնուրոյն շարադրանք, կարող ենք բնորոշել որպէս Աֆթոնիոսի նախակրթութիւնների ձեռնարկի քրիստոնէացուած ընդօրինակութիւն, չորս տեսակի վարժութիւնների բացթողումով: Տեսական մասերի ճշգրիտ թարգմանութիւնը եւ օրինակների փոխարինումը հայ ընթերցողի համար աւելի հասկանալի օրինակներով (հայացում եւ քրիստոնէացում) բնորոշ էր յունաբան թարգմանութիւններին: Այսպէս, Դիոնիսիոս Թրակացու Քերականութեան մէջ որպէս օրինակ հանդէս եկող բոլոր յունական անունները փոխարինուած են քրիստոնէական կամ զուտ հայկական անուններով<sup>19</sup>: Σωκράτης - «Պաւղոս» (էջ 13), «հայրանուն» անուններ՝ Πηλείδης, Αἰακίδης ὁ Ἀχιλλεύς - «Համազասպեան Մանուէլ» (էջ 13-14), դրանց «արական» տարատեսակները՝ Ἀτρείδης, Ἀτρείωνς - «Սամէն, Մանուէլ, Մանիթ, Բարգէն, Մանէճ, Արտակ», καὶ ὁ τῶν Αἰολέων ἴδιος τύπος Ὑρράδιος («իսկ էոլացիների մօտ՝ յատուկ Հիւռուադիոս տեսակը») - «եւ Գորդայիցն ինքեանց գաղափար յատկական, որպիսի Մանայճ» (էջ 14), «իգական» տարատեսակը՝ Πριαμίς, Πελαίς, Ἀδρεστίνη - «Վարդենի, Մանանոյշ, Տրդատուհի եւ Վարդոց» (էջ 14), «ստացական» անուններ՝ Νηληϊοὶ Ἴπποιοι, Ἐκτόρεος χιτών, Πλατωνικὸν βιβλίον («նելէոսեան ձիեր, հեկտորական պատմուճան, պլատոնական գիրք») - «Դաւթեան երիւարն, արքունի պատմուճանն, Պաւղոսական գիրն» (էջ 14), «բաղդատական»՝ Ἀχιλλεύς ἀνδρείότερος Αἴαντος ἢ Ἀχιλλεύς ἀνδρείότερος Τρώων («Աքիլլեսը քաջ է Այասից կամ Աքիլլեսը քաջ է տրոյացիներից») - «Դաւիթ արուորագոյն քան զՍաւուղ կամ Դաւիթ արուորագոյն քան զգեթացիս» (էջ 15), «յարանուն»՝ Θέων, Τρύφων - «Տիրիճան,

Խրախճան» (էջ 16), «պարզ» անուն՝ Μέμνων - Մանան (էջ 16), «բարդ» անուն՝ Ἀγαμέμνων - «քաջ Մանան» (էջ 16), «յարաբարդ» անուն՝ Ἀγαμεμνωίδης, Φιλίππιδης - «քաջ Մանուէլ» (էջ 16), Χειρίσοφος - «Նորայր» (էջ 16), Ὀμηρος - «Պետրոս» (էջ 17), անեզական անուններ՝ Ἀθῆναι, Θῆβαι - «Խոյարաւնք, Յրաւնք» (էջ 17), Ὀμηρος Σωκράτης - «Մարկոս» (էջ 18), «հոմանուն»՝ Αἴας ὁ Τελαμόνιος καὶ Αἴας ὁ Ἴλεως - «Յովհաննէս Չաքարեան եւ Յովհաննէս Չերեղեան» (էջ 19), «երկանուն»՝ Ἀλέξανδρος ὁ καὶ Πάρις - «Եղիազար որ եւ Աւարան» (էջ 19), «մականուն»՝ Ἐνοσίχθων ὁ Ποσειδῶν καὶ Φοῖβος ὁ Ἀπόλλων - «Բաներեգէս Յովհաննէս եւ ձայն գոչման<sup>20</sup> Յովհաննէս» (էջ 20), «ազգական» անուն՝ Φρύξ, Γαλάτης («փուլգիացի, գաղատացի») - «գողերճական, տուհ, վրացի» (էջ 20), Σόλων - «Կորիւն» (էջ 43), Σόλων - «Ենոք» (էջ 43), Ἥλιος - «Աբրահամ» (էջ 44), Πολέμων - «Սողոմոն» (էջ 44), Ἠγεμών - «Ամբակում» (էջ 44), Σερήνος - «Փրիդպոս» (էջ 44), Νοήμων - «Յովսէպոս» (էջ 44), Ἥφαιστος - «Ստեփաննոս» (էջ 44), Δόλιος - Իսահակ (էջ 44), Ἡρώδης - «Յովհաննէս» (էջ 44):

Նմանատիպ առանձին օրինակներ կան նաեւ փրիլսոփայական բնոյթի, մասնաւորապէս Դաւիթ Անյաղթի երկերի թարգմանութիւնների մէջ<sup>21</sup>:

Նոյն տրամաբանութեամբ «Պիտոյից գրքի» յիսունչորս նախակրթութիւնը, որոնք նմոյշ-օրինակներ էին տեսական հատուածները լուսաբանելու համար, հայ հեղինակն ինքնուրոյն է շարադրել<sup>22</sup>, երեսունմէկն ակնյայտօրէն գրուած են Աֆթոնիոսի ընդօրինակութեամբ (վերոյիշեալ թողովածուներում պահպանուել են դրանցից քսանչորսի նախօրինակները, իսկ եօթի նախօրինակների գոյութիւնը նախնա-

կան ժողովածուի մէջ շատ հաւանական է): Տասներեք նախակրթութեան թեմաներն Աստուածաշնչից են (մէկական ներբողեան, պարսաւ եւ բաղդատութիւն<sup>23</sup>, վեց բարառութիւն<sup>24</sup>, չորս նկարագրութիւն<sup>25</sup>), ուստի դրանք չէին կարող յունական նախօրինակ ունենալ եւ հայ հեղինակի ստեղծագործութիւնն են: Եւստասը նախակրթութեան համար<sup>26</sup> երկու հնարաւորութիւնն էլ հաւասարապէս ընդունելի է, չնայած, ասեմք, «ներբողեան աղանոյ» աւելի շուտ հայ հեղինակի ինքնուրոյն ընտրած թեման է, իսկ «ներբողեան պատերազմի» կարող էր նախօրինակ ունենալ Աֆթոնիոսի մօտ, քանի որ խաղաղութեան եւ պատերազմի՝ որպէս մարդկանց կեանքի երկու հաւասարապէս հնարաւոր ժամանակաշրջանի յիշատակումը սովորական էր ճարտասանական գրականութեան մէջ<sup>27</sup> (ներբողեանների շարքում այն աւելի շուտ համապատասխանում է «իր» տարատեսակին, քանի որ «ժամանակի» համար ունենք «ներբողեան գարնայնոյ»<sup>28</sup> V.3):

Երեսունմէկ ընդօրինակաբար գրուած նախակրթութիւնից տասնվեցի թեմաներն են, որ առնչուում են անտիկ առասպելների սիւժէներին եւ պատմական անձանց՝ «Պէտք» (I), «Խրատ» (II), «Եղծումն» (III) գրքերի բոլոր օրինակները: Այդ տասնվեց նախակրթութեան գոյութիւնը չի հակասում մեր վերն արտայայտած մտքին, որ «Պիտոյից գիրքը» քրիստոնէացուած ճարտասանական ձեռնարկ է: Ձէ որ բոլոր չորս «եղծումները» նուիրուած են առասպելների անհաւանականութեան, անվայելչութեան, անօգտակարութեան եւ այլնի ապացուցմանը, իսկ Աֆթոնիոսի 2-րդ՝ «Պատմութիւն» (Διήγημα) եւ 6-րդ՝ «Ստեղծումն»<sup>29</sup> (Κατασκευή) գրքերը հայ հեղինակը բաց է թողել. առաջինում պատմուում են յունական

առասպելներ, իսկ երկրորդը նուիրուած է առասպելների հաւանականութեան, վայելչականութեան, օգտակարութեան եւ այլնի ապացուցմանը<sup>30</sup>:

«Պէտքերը» եւ «խրատները»<sup>31</sup> կարելի է բնորոշել որպէս անտիկ իմաստունների ասոյթների քրիստոնէացուած քննարկում, քանի որ բոլորն էլ հաստատուած են օրինակներով Աստուածաշնչից («զ»՝ «առակ» կէտում) եւ աստուածաշնչային իմաստունների ասոյթներով («է»՝ «վկայութիւն հնոցն» կէտում. I.1.է՝ Աստուած, I.2.է՝ Սիրաք, I.3.է՝ Մովսէս, I.4.է՝ «տէրունեան բանն», I.5.է՝ Պօղոս, II.1.է՝ Սողոմոն, II.2.է՝ Սողոմոն, II.3.է՝ «սաղմոսերգող», II.4.է՝ «երջանիկն Պօղոս», II.5.է՝ «շնորհալիցն Պօղոս», II.6.է՝ «առակողն», II.7.է՝ «երանելին Պօղոս»): Աֆթոնիոսի մօտ օրինակներն անտիկ պատմութիւնից ու գրականութիւնից են. յիշատակուած են Թեմիստոկլեսը՝ որպէս Սալամիսի մօտ ճակատամարտի յաջող աւարտի երախտաւոր (Նիկ. III.2), ողջախոհութեան պատգամը չպահած աթենացի Նինոս քրմուհին (Նիկ. III.3), յունական քաղաքների մէջ Աթենքի հզօրացումը՝ կապուած նրա բարեկեցութեան հետ (Նիկ. IV.2), Թերսիտէսի վէճն Ագամեմնոնի հետ եւ Ողիսեւսից դրա համար պատժուելը (Նիկ. IV.3), Իրոսի եւ Ողիսեւսի՝ աղքատութեան պատճառով կրած անխորթութիւնները (Աֆթ. IV), Թեմիստոկլեսի իմաստութիւնը պարսիկների դէմ ճակատամարտելիս (Նիկ. IV.1), իսկ որպէս ասոյթը հաստատող παλαίον - «Հինք» հանդես են գալիս Սոֆոկլեսը (Նիկ. III.2, 3, IV.3), Պինդարոսը (Նիկ. IV.2), Եւրիպիդէսը (Աֆթ. IV), Հոմերոսը (Նիկ. IV.1), Հեսիոդոսը (Աֆթ. III):

Թէանոյի մասին «պէտքում» (I.5) Աֆթոնիոսի մօտ խօսքը Դեմետեր-օրինատուի տօնին (τὰ Θεσμοφόρια) մասնակցե-

լու մասին է, եւ հարցը տրուած է գաղտնածէսին մասնակցելու ու սրբատեղի մտնելու առիթով, իսկ «Պիտոյից գրքում» հանգամանքները չեն նշուած, եւ խօսքը «տէրունիք» մտնելու մասին է, որը «բ» («զնոյն ինքն զպէտսն փոխելով ասացես») կետում փոխարինուած է «տէրունեան տաճարով»<sup>32</sup>: «Որ աստուծոյ հաւանի, առաւել նա լուիցէ նմա» խրատի (4) վերնագիրը մէջբերում է Իլիականից (I.218), սակայն ձեւափոխուած, քանզի Հոմերոսը խօսում է աստուածների մասին: Բացի այդ, Լակեդեմոնացիների քաջութեանը նուիրուած պէտքում Աֆթոնիոսը նշում է, որ նրանք սերում են Հերակլեսից (Նիկ., էջ 277), ինչը զուգահեռ չունի հայերէն նախակրթութեան մէջ, իսկ «խրատ» I-ում ոչ մի արձագանքի չի արժանացել այն միտքը, որ առանց դրամական միջոցների անհար կը լինէր նոյնիսկ աստուածների պաշտամունքը (Նիկ., էջ 280):

Այսպիսով, «պէտքերում» եւ «խրատներում» հայ հեղինակը վարուել է այլ կերպ, քան, ասենք, ներբողեաններում՝ Թուկիդիդէսի (Աֆթ. VIII) կամ Թեմիստոկլէսի ներբողեանի (Նիկ. VIII.7) փոխարէն գրելով Մովսէսի ներբողեանը (V.1): Նա համարեայ ճշտութեամբ թարգմանել է անտիկ իմաստունների ասոյթները եւ հաստատել դրանք Աստուածաշնչով: «Բանք իմաստասիրաց» վերտառութեամբ ժողովածուները վկայում են, որ անտիկ իմաստունների ասոյթներն ընդունուել էին Հայաստանում<sup>33</sup>:

Սակայն երեք նշուած տեսակների սահմաններում հայ ընդօրինակողը որոշ ընտրութիւն է կատարել՝ իր հինգ «պէտքերի» թեմաները նա ընտրել է նախօրինակի եօթից (տե՛ս ծնթ. 38), եօթ «խրատներինը»՝ ութից (հմմտ. ծնթ. 62), չորս «հղծումներինը»՝ տասից (հմմտ. ծնթ.

87): Դժուար է բացատրել այսպիսի ընտրութեան դրդապատճառները, սակայն հաւանաբար նա չի ցանկացել գրել Իսուկրատէսի եւ Դեմոսթենէսի անունով երկուական «պէտք», բաւարարուելով մէկականով, Պինդարոսի անունը միակ բաց թողած «խրատում» կարող էր նրան պակաս ծանօթ լինել, քան միւս հեղինակներինը, իսկ «հղծումների» դէպքում նա հաւանաբար սահմանափակուել է չորս թեմաներով՝ չցանկանալով շատ հեթանոսական պատմութիւններ պատմել (թեկուզ եւ հղծելով դրանք):

Բացի անտիկ թեմաներ արծարծող «պէտքերից» ու «խրատներից» եւ անտիկ առասպելների «հղծումներից» մի կողմից, եւ Աստուածաշնչի թեմաներով գրուած նախակրթութիւններից միւս կողմից, «Պիտոյից գրքում», ինչպէս Աֆթոնիոսի մօտ, կան նաեւ «չեզոք» կամ «համամարդկային» թեմաների նուիրուած նախակրթութիւններ, ընդ որում դրանցից առնուազն տասնհինգը գրուած են Աֆթոնիոսի ընդօրինակութեամբ: Դրանցում եւս քրիստոնէացման միտում կայ: Այսպէս, «Հասարակ տեղիների» (IV) վերջում սովորաբար որպէս դատաւորների դաշնակից հանդէս է գալիս «վեհ» եւ «ամենեցունցն թագաւոր Աստուած» (1. «Յաղագս շան», էջ 75.3, 75.22-23), «վեհ» եւ «բարձրեալ» (2. «Յաղագս բժշկի, որ մահու դեղս տայ», էջ 78.21,22, 78.30), «վեհ» (3. «Յաղագս ճարտասանի մատնչի, էջ 83.17»), «ի վերուստն ամենեցուն նախախնամող եւ դատաւոր» (4. «Յաղագս հուղկահարի», էջ 89.5), «օրէնք աստուածայինք, աստուածային բարկութիւնք» (5. «Յաղագս գերեզմանակրկտի», էջ 94.8-9, 94.22)<sup>34</sup>:

«Ներբողեաններում», «պարսաւենբում» եւ «բաղդատութիւններում» Աստուած յիշատակուած է որպէս այս կամ

այն առարկայի նախապատճառ՝ «նախածնող» կէտում (V.3 «Ներբողեան գարնայնոյ», էջ 10, V.4 «Ներբողեան պատերազմի», էջ 114, VI.2 «Պարսաւ ճիոյ», էջ 131, VI.3 «Պարսաւ լերին», էջ 136.9, VII.4 «Բաղդատութիւն անդաստանի եւ նաւահանգստի», էջ 169.23)<sup>35</sup>, այդ դերում հանդես են գալիս Աբրահամը եւ Դաւիթը (V.4 «Ներբողեան պատերազմի», էջ 115), Նոյը (V.5 «Ներբողեան աղանոյ», էջ 120), Նոյը եւ Աբրահամը (VII.2 «Բաղդատութիւն մշակութեան եւ զինուորութեան», էջ 160): «Ներբողեան աղանոյ» (V.5) նախակրթութեան մէջ աղանին յիշատակուած է «ի Նոյի դարին» ցուցաբերած հաւատարմութեան համար, նաեւ որ «Յորդանան ի վերայ աստուածային բանի, ի նմանութիւն աղանոյ տէրունեանն իջանել հոգի», եւ որ մահուանից յետոյ զոհաբերուած է Աստուծուն (էջ 123):

«Նկարագրութիւններում» Աֆթոնիոսի այն միտքը, թէ փէակները բախտաւոր էին ոչ այնքան այն բանի համար, որ սերում են աստուածներից, որքան որ երկրպագել են պարտէզները (Լիբ. XII.8, էջ 485), փոխարինուել է այն մտքով, որ նախաստեղծ Ադամի ամենամեծ բախտաւորութիւնը դրախտի վայելքներն էին (IX.6 «Արտասանութիւն բուրաստանի», էջ 216): Աֆթոնիոսի մօտ որսի բարեյաջող աւարտից յետոյ զոհեր են մատուցուած այն աստուածներին, որոնք մարդկանց համար յայտնագործել են որսորդութիւնը (Լիբ. XII.10, էջ 489), իսկ «Պիտոյից գրքում» որսը բաժանեցին «զոհացողք լինելով զԱստուծոյ» (IX.5 «Արտասանութիւն որսոյ», էջ 215): Աֆթոնիոսի մօտ նաւահանգստում կար Պոսեյդոնի մի սրբազան պուրակ, որտեղ երկու տեսակի աղօթքներ էին լսուած՝ ոմանք փրկութիւն էին հայցում ապագայի համար, միւսներն



Սպարտաց. եւ նորա զնիզակն ցուցեալ աւսէ. «Յայսմ վայրի»» (Պիտ. էջ 38):

Այս պէտքն, ըստ Յ. Մանանդեանի<sup>45</sup>, նոյնքան հաւանականութիւն ունի Խորենացու «զի սահմանք քաջացն, ասէ, զէնն իւրեանց, որքան հատանէ, այնքան ունի»<sup>46</sup> (I Ը) հատուածի աղբիւրը լինելու, որքան համապատասխան պէտքը Թէոնի մօտ. «Եւ եւս Լակոնացի այր հարցեալ որումն զնա՝ ո՞րը զսահմանս երկրին ունին Լակեդեմոնացիք՝ եցոյց զնիզակն»<sup>47</sup>:

Երկու հայերէն «պէտքի» յունարէն նախորինակները չեն պահպանուել:

I.2. «Աղէքսանդրոս Մակեդոնացի հարցեալ յունմեմնէ. «Ո՞րը են քո գանձք», զսիրելիս ցուցեալ ասաց. «ի սոսա»» (Պիտ. էջ 33)<sup>48</sup>:

Պահպանուել է, սակայն, Աֆթոնիոսի համար ընդօրինակութեան աղբիւր ծառայած՝ Լիբանիոսի նախակրթութիւնը. Ἀλέξανδρος ἐρωτῆθεις παρὰ τινος ποῦ ἂν ἔχοι τοὺς θησαυροὺς, τοὺς φίλους ὑπέδειξεν (Լիբ. III.1, էջ 63)<sup>49</sup>: Աֆթոնիոսի նախնական ժողովածուի մէջ անշուշտ եղել է նման վերնագրով նախակրթութիւն<sup>50</sup>: Ինչպէս հայերէն նախակրթութեան մէջ, այնպէս էլ Լիբանիոսի մօտ յիշատակուում է Արիստոտելի աշակերտ լինելու հանգամանքը:

I.3. «Զի զՍոկրատէս ոմն եհարց ի մաստնաւոր, թէ «զմէ՞ ի քաջ մտառուացն, եւ ի վատառուսն զնոյն պահանջես համարս»<sup>51</sup>, եւ նա ասէ, թէ. «ի նոցանէ՞ վասն փութոյն, իսկ ի վատառուաց ի միտ՝ վասն ջանոյն»» (Պիտ. էջ 35):

Աֆթոնիոսի նախորինակը չի պահպանուել, սակայն ասոյթների մի ձեռագիր ժողովածու (Gnomologium Vaticanum, N 355) վերագրում է այն Իսոկրատէսին. «Իսոկրատէսը սովորութիւն ունէր ասելու. «Ու-

սուցիչները պէտք է մեծ վճարներ ստանան իրենց աշակերտներից. շնորհալիները՝ որովհետեւ նրանք շատ են սովորում, իսկ բթամիտներից՝ որովհետեւ նրանք շատ նեղութիւն են պատճառում»<sup>52</sup>:

«Զի զՍոկրատէս» կարող ենք մեկնաբանել որպէս «զԻսոկրատէս»-ի աղաւաղման արդիւնք:

Նոյն ասոյթը «Բանք» իմաստասիրացում հանդէս է գալիս անհեղինակ. «Վարձս մեծամեծս հասանէ վարդապետաց, զի առցեն յաշակերտաց իւրեանց. եւ զայս այսպէս ի զգաստիցն, զի բազում ուսանին, իսկ ի մտակուրացն, զի կոծ բազում տացեն կրել»<sup>53</sup>:

Չնայած ասոյթն ամենայն հաւանականութեամբ պատկանել է Իսոկրատէսին (ի դէպ, «իմաստակ»<sup>54</sup> բնորոշումը հաւասարապէս կարող էր վերաբերել ե՛ւ Սոկրատէսին, ե՛ւ Իսոկրատէսին), սակայն կենսագրական տեղեկութիւնները, ճիշտ է, ոչ լրիւ, աւելի համապատասխանում են Սոկրատէսի կեանքի հանգամանքներին: Այսպէս, մի աւանդութեան համաձայն, նա երիտասարդ հասակում իր հօր պէս զբաղուել է քանդակագործութեամբ<sup>55</sup>, ինչը բացատրում է, որ նա «միայն հասուն տարիքում ձեռնամուխ եղաւ մտաւոր զբաղմունքներին»: Նրա հայր Սոփրոնիսկոսը քանդակագործ էր, իսկ մայր Ֆենարետէն՝ մանկաբարձուհի, երեւոյթին՝ ոչ հարուստ մարդիկ (այսինքն՝ Սոկրատէսն «աղքատ տնից էր»): Համաձայն Պլատոնի ու Քսենոփոնի, նա ինքն էլ յայտնի էր որպէս աղքատ, աւելի շուտ, պատերազմի հետեւանքով աղքատացած մարդ<sup>56</sup>:

Իսոկրատէսի կենսագրական տուեալները հիմնականում չեն համապատասխանում ընդգծուած խօսքերին. նրա հայր Թէոփորոսը հարուստ մարդ էր՝ սրինգների արհեստանոցի տէր<sup>57</sup>: Ճիշտ է, նա էլ

կորցրեց իր ունեցուածքը Պելոպոնէսեան պատերազմի վերջում, երբ Իսոկրատէսը մօտ 23 տարեկան էր, սակայն մինչ այդ նա մեծ գումարներ էր վճարել որդու կրթութեան համար<sup>58</sup>: Այնուամենայնիւ, «Հասաւ ուսուցչապետութեան գերագոյն աստիճանին» աւելի շուտ կարող էր ասուել Իսոկրատէսի մասին, քանի որ նա ճարտասանական դպրոց է դեկավարել: Իսկ վերնագրի «զնոյն պահանջես հազարս» համահունչ է Իսոկրատէսի մասին այն աւանդութեանը, որի համաձայն բոլոր աշակերտները նրան նոյն վարձն են վճարել՝ 1000 դրաքմէ:

Ամէն դէպքում, թուում է, ասոյթը Սոկրատէսին է վերագրուել հայկական հողի վրայ, սակայն մե՛րթ Սոկրատէսին, մե՛րթ Իսոկրատէսին համապատասխանող կենսագրական տուեալների շփոթը այնքան էլ հասկանալի չէ:

II «Խրատներ»<sup>59</sup>

IV.[1] Χρή πεινήν φεύγοντα, καὶ ἐς μεγακίτητα πόντον

Րίπτειν, καὶ πετρῶν, Κύρνε, κατ' ἡλιβάτων (Աֆթ., էջ 68 «Պէտք է, աղքատութիւնից փախչելով, նետուել մեծ կէտերով լի ծովը, Կիւրնոս, եւ բարձր ժայռերից») - I.3. Արժան է յաղքատութենէ փախչել, եւ ի մեծն անկանել ծով, եւ կամ ի վիմաց հոսիլ ի բարձանց» (Պիտ. էջ 49):

Արդէն Բաուսարտները նկատել է<sup>60</sup>, որ Դաւիթ Անյաղթի մօտ նոյն երկտողն որ Դաւիթ Անյաղթի մօտ նոյն երկտողն էր համարել այն բանի, որ գործ ունենք տարբեր թարգմանիչների հետ: Հմմտ. «... որպէս եւ Թէոփոնս յայտ առնէ առ ոմն Կիւրնոս ասելով, թէ պարտ է յաղքատութենէ փախչել եւ ի մեծակիտեղն անկանել ծով եւ ի վիմաց, ով Կիւրնէ, հոսիլ յարեգակնակոխ»<sup>61</sup>:

Հայկական տարբերակում խրատը վերագրուած է Բիասին: Բիասը եօթ իմաստուններից մէկն էր: Նրա անունով մի շարք ասոյթներ են պահպանուել, մասնաւորապէս Դեմետրիոս Տալերոնցու՝ «Եօթ իմաստունների ասոյթներ»-ի մէջ, որ մտել է Ստրեբուսի Անթոլոգիայի կազմի մէջ, նաեւ վերոյիշեալ Gnomologium Vaticanum ժողովածուի մէջ<sup>62</sup>: Սակայն դժուար է բացատրել, թէ ինչու է Թէոփոնիսի խրատը վերագրուել Բիասին:

IV.1. Σοφὸν ἐν βούλευμα ὑπὲρ χεῖρας πολλὰς (Նիկ., էջ 278 «Մէկ իմաստուն որոշումը բազմաթիւ ձեռքերի է գերազանցում») - II.6. «Իմաստուն խորհրդով՝ բազմաձեռն զօրութեան յաղթէ, իսկ անուսումնութիւն անհնարին չար է» (Պիտ. էջ 55):

Վերջին մասը բացակայում է յունարէն վերնագրում, սակայն երկտողն ամբողջովին առկայ է Եւրիպիդէսի չպահպանուած «Անտիոպէ» ողբերգութեան պատառիկների թւում.

Σοφὸν γὰρ ἐν βούλευμα τὰς πολλὰς χεῖρας

Νικᾷ σὺν ὄχλῳ δ' ἀμαθία πλείστον κακόν<sup>63</sup>.

«Մէկ իմաստուն խորհուրդը բազմաթիւ զինուորների է յաղթում, իսկ ամբոխի հետ սգիտութիւնը մեծագոյն չարիք է»: Հայերէն վերնագրում սὺν ὄχλῳ (որ թարգմանեցինք «ամբոխի հետ») թարգմանուած չէ, թերեւս՝ ոչ այնքան հասկանալի լինելու պատճառով, իսկ «իմաստուն խորհուրդ» ուղղականը փոխարինուել է գործիական հոլովով, որն առկայ է նաեւ նախակրթութեան «բ»՝ «յարասական» կէտում. «խոհականագոյն իմաստութեամբ»: Χεῖρες πολλαί բառացի նշանակում է «բազմաթիւ ձեռքեր», իսկ փոխաբերաբար՝ «բազմաթիւ զինուորներ»:

«բազմաձեռն զորութիւն» թարգմանութիւնը շատ յաջող է:

«Բանք իմաստասիրաց»-ում այս ասոյթը վերագրուած է Դիոգորոսին. «Դիոգորոս ասէ. Իմաստուն խորհուրդ վեհագոյն է քան զձեռս զգորաց» (էջ 10):

Հայերէն նախակրթութեան մէջ խօսուած է ողբերգութիւնները յամբական («մեծավերջական») չափով գրելու մասին, ինչը չկայ յունարէն տեքստում:

IV.2. Δεί δὴ χρημάτων καὶ ἀνευ τούτων οὐδέεν ἔστι γενέσθαι τῶν δεόντων (Նիկ., էջ 279 «Պէտք են միջոցներ, եւ առանց նրանց չի կարող լինել անհրաժեշտ բաներից ոչինչ») - II.1. «Պէտք են ընչից, եւ առանց սոցա ոչ է հնար ինչ լինել յարժանեացն» (Պիտ. էջ 44):

Այն, որ Դոմեսթենէսը «Թշնամիների աւազակային յարձակմանը դիմակայելու համար զանազան ամուր զէնքեր, քաջարի զօրքեր ու ամրութիւններ պատրաստեց», համապատասխանում է իրականութեանը: Դեմոսթենէսը քաղաքական գործիչ է եղել. մակեդոնացիների դէմ պատերազմից յետոյ նա նախաձեռնել է Աթենքի ամրութիւնների վերականգնումը: Այս տեղեկութիւնը չկայ յունարէն նախակրթութեան մէջ:

IV.3. Ἄφρων δ' ὅς κ' ἐθέλει πρὸς κρείσσονα ἀντιφείζειν (Նիկ., էջ 281) - II.2. «Յիմար է, որ ընդ վեհս քան զինքն հակառակէ» (Պիտ. էջ 47):

Մէջբերում է Հեսիոդոսի «Աշխատանքներ եւ օրեր» (208) պոեմից:

Հայերէն նախակրթութեան մէջ Հեսիոդոսը Հոմերոսից բարձր է դասուում, ինչը, թուում է, զուտ ճարտասանական հնարք է:

Երեք «խրատի» յունարէն նախորինակները չեն պահպանուել:

II.4. «Որ աստուծոյ հաւանի, առաւել նա լուրիցէ նմա» (Պիտ. էջ 51):

Այս խօսքերը Հոմերոսի Իլիականից են (I.218), որտեղ սակայն յոգնակի «աստուածներ» են. ὅς κε θεοῖς ἐπιπέιθηται, μάλα τ' ἔκλυον αὐτοῦ «ով ենթարկուած է աստուածներին, առաւել լսում են նրան»:

Հոմերոսի այս խօսքերը մէջբերուած են էլիոս Արիստիդէսի ճաներից մէկում<sup>64</sup>:

II.5. «Ոչ ամենեցուն զնոյն տուեալ է, եւ ոչ օգուտ բերէ» (Պիտ. էջ 53):

Մենանդրոսի այս ասոյթի յունարէն հաւանական զուգահեռը գտնուում ենք Gνωταί Menandrou kai; Filistinwno," - «Մենանդրոսի եւ Ֆիլիստիոնի ասոյթներ» ժողովածուի մէջ<sup>65</sup>:

Καιρὸς ὁ τυχῶν ἔστιν ἀνθρώποις ἀεί· πᾶσιν γὰρ οὐ πέφυκεν ἀνθρώποις ἴσος.

κέρδη γὰρ ἄλλοις χήδοναὶς θηρεύεται, ἄλλοις δὲ λύπας προσπορίζει καὶ βλάβας.

«Միշտ տեղին է մարդկանց հետ պատահածը,

Քանզի այն նոյնը չէ բոլոր մարդկանց համար,

Չէ՞ որ ոմանց համար այն որսում է օգուտ ու վայելքներ,

Իսկ ուրիշներին բերում է վիշտ ու վնասներ»:

Այն կրկնում է երկու անգամ՝ վերագրուելով մէկ Ֆիլիստիոնին, մէկ՝ Մենանդրոսին: Ֆիլիստիոնը միմոսական բանաստեղծ էր, եւ նրան յաճախ շփոթել են նոր Ատտիկեան կատակերգութեան՝ Մենանդրոսից յետոյ ամենայայտնի ներկայացուցիչ Ֆիլեմոնի հետ<sup>66</sup>: Ակնյայտ է, որ որպէս նախակրթութեան վերնագիր այս ասոյթը հանդէս է եկել համառօտուած տեւքով:

II.7. «Կրթութիւն է ամենայն ինչ» (Պիտ. էջ 57):

Ասոյթը վերագրուած է Պերիանդրոսին, որը Կորնթոսի տիրակալն է եղել 625-585 թթ. մ. թ. ա.: Համարուել է եօթ իմաստուններից մէկը<sup>67</sup>: Նրա մի շարք ասոյթներ պահպանուել են Դեմետրիոս Ֆալերոնցու կազմած ասոյթների ժողովածուի մէջ՝ Ստրաբելի ծաղկաքաղի<sup>68</sup> կազմում: Դրանցից առաջինն է Μελέτα τὸ πᾶν - «Հոգայ ամէն ինչի մասին», իսկ մէկ տառի փոփոխութեամբ՝ Μελέτη τὸ πᾶν տեսքով նոյն ասոյթը պահպանուել է Դիոգենէս Լաերտացու (1.99)<sup>69</sup> մօտ. այդպիսին պիտի եղած լինէր համապատասխան «խրատի» վերնագիրն Աֆթոնիոսի ժողովածուի մէջ, եւ այն լիովին համապատասխանում է հայերէն «խրատի» վերնագրին:

Եւ այսպէս, պահպանուած նախորինակ ունեցող «պէտքերի» ու «խրատների» ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ դրանց առաջինն՝ «ասողին գովութիւն» կէտը սովորաբար ծաւալով գերազանցում է Աֆթոնիոսի համապատասխան հատուածները: Յաճախ այդ «ա»<sup>70</sup> կէտին նախորդում է մի չհամարակալուած հատուած՝ այն բնագաւառի գովասանքով, որին պատկանում է ասոյթի հեղինակը, ինչը չկայ Աֆթոնիոսի մօտ (գովաբանուում է փիլիսոփայութիւնը, եւ մասնաւորապէս կրֆիկեան, Դիոգենէսից առաջ, իմաստակները՝ Սոկրատէսից ու Բիասից առաջ, աթենացիների քաղաքն իր զանազան ճարտասաններով՝ Դեմոսթենէսից առաջ, բանաստեղծական արուեստը՝ Հոմերոսից առաջ, կատակերգակները՝ Մենանդրոսից առաջ, բանաստեղծներն ու մասնաւորապէս ողբերգակները՝ Եւրիպիլմասնաւորապէս ողբերգակներն ու մասնաւորապէս եօթ իմաստունները՝ Պերիանդրոսից առաջ):

Սակայն «Պիտոյից գրքի» այդ հատուածներն աւելի ծաւալուն են ընդհատուածները:

նուր տեղեկութիւնների ու ճոխացուած գովասանքների հաշուին եւ համարեայ լրացուցիչ տեղեկութիւններ չեն պարունակում՝ որոշ բացառութիւններով: Այսպէս, Դիոգենէսի պատկանելութիւնը կրֆիկեան փիլիսոփայական ուղղութեանը<sup>71</sup> (I.1), Պիլթագորասի այցելութիւնը Եգիպտոս, այնտեղ գիտելիքներ իւրացնելը եւ յունարէնի թարգմանելը (I.5), աթենացիների քաղաքի՝ բազմապիսի ճարտասաններ ունենալու հռչակն ու Դեմոսթենէսի կողմից քաղաքն ամրացնելը (II.1) առկայ յունարէն նախորինակում չեն յիշատակուում: Միւս կողմից, այն, որ լակեդեմոնացիներն, ուրիշ ժողովուրդների գրաւելով, հրամայում էին քանդել պարիսպները (I.4), ոչ թէ կոնկրետ տեղեկութիւն է, այլ աւելի շուտ տուեալ պէտքի տրամաբանութեամբ պայմանաւորուած՝ հայ հեղինակի երեւակայութեան արդիւնք: Այն դատողութիւնները, որ Հեսիոդոսը գերազանցել է բոլոր բանաստեղծներին, եւ նոյնիսկ Հոմերոսին (II.2), եւ որ Հոմերոսը հռչակուել է որպէս բանաստեղծների հայր (II.4), նոյնպէս կոնկրետ տեղեկութիւններ չեն թուում, այլ գովասանքը սաստկացնելու նպատակով յօրինուած մանրամասներ:

Ինչ վերաբերում է ասոյթների հեղինակային պատկանելութեան վերաբերեալ տարածայնութիւններին, այդ երեւոյթը բաւական տարածուած էր հէնց յունական աւանդութեան մէջ: Օրինակ՝ Թէոնի մօտ. «ոչ վայել է Անտիսթենի, որ էր Ատտիկեցի՝ երթեալ յԱթէնս՝ ուստի ի Լակեդեմոնս՝ ի կանանոցէն ասել յառնանոցն գալ»<sup>72</sup>, իսկ Նիկողայոսի ժողովածուի մէջ պահպանուած՝ Աֆթոնիոսի գրած մի «պէտքում» նոյն խօսքերը վերագրուած են Դիոգենէսին (տե՛ս ծնթ. 38):

Նոյնը նկատելի է եւ «Բանք իմաստասիրացից»-ից վերը բերուած զուգա-

հեռուների մէջ. Իսկրատէսի անունով յայտնի պէտքն (ԱՖթ. III) այնտեղ վերագրուած է Դեմոսթենէսին (տե՛ս ծնթ. 33), Եւրիպիդէսի ասոյթը (Նիկ. IV.1, էջ 278)՝ Դիոգորոսին, իսկ Սոկրատէսի անունով պէտքն (Պիտ. I.3) անանուն է:

Թերեւս նոյն երեւոյթով փորձենք բացատրել Թէոգնիսի երկտողի վերագրուելը Բիաս իմաստակին, չնայած յայտնի յունական աւանդութիւնը միաձայն յիշատակում է Թէոգնիսին<sup>73</sup>: Բառուզարտներն աւելի բարդ բացատրութիւն է առաջարկել<sup>74</sup>. Մովսէսը (Բառուզարտների համոզմամբ, «Պիտոյից գրքի» հեղինակը Մովսէս խորենացին էր), երբ նրա ձեռքի տակ են եղել յունական աղբիւրները (ըստ նրա՝ Աֆթոնիոսը, Թէոնը եւ Նիկողայոսի համար աղբիւր ծառայած մի ժողովածու), արտագրել է միայն հրահանգներն ու նախակրթութիւնների վերնագրերը, եւ հետագայում, նախակրթութիւնների տեքստերը գրելիս, կարող էր շփոթել հեղինակների անունները. տուեալ դէպքում շփոթութեան պատճառ կարող էր հանդիսանալ Թէոնի մօտ Բիոնին վերագրուած հետեւեալ ասոյթը. «Բիոն իմաստակ զարծաթսիրութիւն մայրաքաղաք ասէր ամենայն չարութեան գոլ»<sup>75</sup>. ուրեմն շփոթուել են նաեւ Բիասն ու Բիոնը<sup>76</sup>: Նշենք, որ σοφιστής - «իմաստակ» մակդիրը սովորական էր Բիոնի համար<sup>77</sup>: Իսկ ինչ վերաբերում է Հայերէն «պէտքի» այն տեղեկութեանը, որ Բիաս իմաստակը կատարելութեան է հասել ճարտասանական եւ բանաստեղծական արուեստներում, հաւանաբար նման մի աւանդութիւն եղել է Բիոնի վերաբերեալ: Յամենայն դէպս, Դիոգենէս Լաերտացու՝ Բիոնի կենսագրութեան վերջում նշում է, որ եղել են տասը Բիոն, դրանցից վեցերորդը բնորոշում է որպէս ճարտասան (ῥητορικ

ός), իսկ եօթներորդը՝ մելոսական բանաստեղծ (μελικός ποιητής)<sup>78</sup>:

Իսկրատէսի անունն ամենայն հաւանականութեամբ հայկական հողի վրայ է փոխարինուել Սոկրատէսով («գիտկրեւտէս»-ի փոխարինումը «Ջի գիտկրատէս»-ով հեշտ է պատկերացնել, իսկ Ἴσοκράτης եւ Σωκράτης ձեւերի միջեւ տարբերութիւնն աւելի մեծ է), սակայն կենսագրական տուեալների մէջ տիրող խառնաշփոթը ստիպում է հատուածն առայժմ հանելուկային համարել:

Մէկ անգամ եւս անդրադառնանք Էրկու պէտքերի (I.2, 3) ու երեք խրատների (II.4, 5, 7)՝ չպահպանուած նախորինակների մասին վարկածին: Ժամանակին մենք հաւանական ենք համարել, որ Աֆթոնիոսի նախնական ժողովածուի մէջ այդպիսիք պէտք է որ եղած լինէին<sup>79</sup>, քանի որ «բոլոր անտիկ հեղինակների, պատմական դրուագների, դիցաբանութեան մասին տեղեկութիւններ պարունակող նախակրթութիւնները գրուած են Աֆթոնիոսի ընդօրինակութեամբ, որից եւ քաղուած են նրանց մասին բերուող համարեայ բոլոր տեղեկութիւնները»<sup>80</sup>: Այժմ փորձենք հաստատել այդ միտքը եւս մի փաստարկով:

Մինչեւ ճարտասանական վարժութիւնների առարկայ դառնալը<sup>81</sup>, փիլիսոփաների, բանաստեղծների եւ այլ յայտնի մարդկանց իմաստուն ու դիպուկ ասոյթները շատ տարածուած են եղել անտիկ գրաւոր ու բանաւոր աւանդութեան մէջ: Տարբեր հեղինակներ դրանց ժողովածուներ են կազմել, որոնցից պահպանուել են մի քանիսը՝ Դեմետրիոս Ֆալերոնցունը՝ Ստրեբուսի «Անթոլոգիայի» կազմում, Դիոգենէս Լաերտացու «Յայտնի փիլիսոփաների կեանքը», Պլուտարքոսի «Տասը ճարտասանների կեանքը», ինչպէս նաեւ Gnomologium Vaticanum, Gnomologium Parisi-

num անուանումներով յայտնի հաւաքածուները<sup>82</sup>: Որոնումները ցոյց տուեցին, որ հայերէն բոլոր «պէտքերի» ու «խրատների» աֆթոնիոսեան նախորինակները զուգահեռներ ունեն նշուած ժողովածուներում կամ այլ գրուածքներում, մասնաւորապէս աւելի վաղ գրուած ճարտասանական գործերում, հետեւաբար հայերէն «պէտքերի» ու «խրատների» այդօրինակ զուգահեռների առկայութեան եւ յունական ճարտասանական ձեւնարկներում նրանց նախորինակների բացակայութեան դէպքում տրամաբանական է ենթադրել, որ վերջինները պարզապէս չեն պահպանուել:

Այսպէս, Դիոգենէսի մասին «պէտքը» (I.1) հանդիպում է Հերմոգենէսի նախակրթութիւններում<sup>83</sup>, Ալեքսանդր Մակեդոնացու «պէտքը» (I.2)՝ «Վատիկանեան գնոմոլոգիոնում»<sup>84</sup>, Սոկրատէսի մասին «պէտքը» (I.3)՝ նոյն տեղում՝ Իսկրատէսի անունով<sup>85</sup>, Լակոնացու մասին «պէտքը» (I.4)՝ նոյն տեղում, ինչպէս նաեւ «Փարիզեան գնոմոլոգիոնում», Պլուտարքոսի տարբեր գրուածքներում եւ Կիկերոնի մօտ<sup>86</sup>, Թէանոյի մասին «պէտքը» (I.5)՝ Դիոգենէս Լաերտացու, Ստրեբուսի մօտ եւ «Փարիզեան գնոմոլոգիոնում»<sup>87</sup>, Դեմոսթենէսի «խրատը» (II.1)՝ Ստրեբուսի մօտ (4.31a.31), Լիբանիոսի նախակրթութիւնների կազմում (IV.3), Հեսիոդոսի «խրատը» (II.2)՝ Թէոնի նախակրթութիւնների մէջ (էջ 58), Ստրեբուսի մօտ (3.4.3), Լիբանիոսի ճառերում (Oraciones 55.36) Թէոգնիսի, իսկ հայերէն տարբերակում Բիասի անունով հանդես եկող «խրատը» (II.3)՝ Ստրեբուսի մօտ (4.32b.38), Հոմերոսի «խրատը» (II.4)՝ էլիոս Արիստիդէսի մօտ, Մենանդրոսի «խրատը» (II.5)՝ Մենանդրոսի եւ Յիլիստիոնի ասոյթների ժողովածուի մէջ, Եւրիպիդէսի «խրատը» (II.6)՝ Ստրեբուսի

մօտ (4.13.3), Պլուտարքոսի մօտ (Moralia 790A5), Պերիանդրոսի «խրատը» (II.7)՝ Ստրեբուսի (3.1.172, fr.7) եւ Դիոգենէս Լաերտացու (1.99) մօտ:

Այսպիսով, հայերէն այն «պէտքերն» ու «խրատները», որոնց յունարէն զուգահեռները չեն պահպանուել, եւ որոնց համապատասխան ասոյթները գտնուած են զանազան ժողովածուներում, անպայմանօրէն նախորինակ են ունեցել Աֆթոնիոսի նախնական ժողովածուի մէջ:

III «Եղծումներ»

Աֆթոնիոսի «եղծումներից» պահպանուել են ութը՝ մէկն իր ժողովածուի մէջ, եօթը՝ Նիկողայոսի<sup>88</sup>: «Պիտոյից գրքում» գտնուած ենք դրանցից երկուսի ընդօրինակութիւնը:

V.3. Περὶ ἀνασκευῆς τῶν κατὰ Κανθαύλην· Ἀνασκευῆ, ὅτι οὐκ εἰκότα τὰ κατὰ Κανθαύλην («Կանդաւլիսի [պատմութեան] եղծման մասին. Եղծում, որ Կանդաւլիսին վերաբերող [պատմութիւնն] անհաւանական է», Նիկ. էջ 287) - III.2. «Եղծ զԿանտուղեայ» (էջ 63):

Հերոդոտոսն անուանուած է «շարագիր», որն Աֆթոնիոսի συγγραφεύς-ի ճշգրիտ թարգմանութիւնն է: Յունարէն բառը նշանակել է «արձակագիր», նաեւ մասնաւորապէս «պատմագիր» եւ սովորաբար հակադրուել ποιητής «բանաստեղծին»:

Յունարէն եւ հայերէն նախակրթութիւնների համեմատութիւնը ցոյց է տալիս հետեւեալը. յունարէն հատուածում (համմտ. Հերոդոտոս, 1.8-12) չի նշում, որ դէպքերը կատարուել են լիդացիների թագաւորութեան մէջ, ինչպէս եւ այն, որ Գիգեսը թագուհուն մերկ է տեսել, սակայն հետագայ շարադրանքից այդ բաներն ակնյայտ են դառնում (Նիկ., էջ 288): Գիգեսի՝ թիկնապահ<sup>89</sup> («մարտա-

կից») լինելու հանգամանքը յիշատակուած է միայն հայերէն տեքստում:

Յունարէն ու հայերէն նախակրթութիւններում դէպքերի նկարագրութիւնը բաւական նման է, սակայն Հերակլեսից սերելու մասին տեղեկութիւնը հայ ընդօրինակողը զանց է առել:

VI.8' Ανασκευή ὅτι οὐκ εἰκότα τὰ κατὰ Νιόβην (Նիկ. էջ 310) - III.1. «Եղծ զՆէովբայ» (Պիտ. էջ 60):

Երկու նախակրթութեան մէջ էլ այս առասպելի հետ կապուած որեւէ հեղինակ չի յիշատակում, միայն յունարէնի վերջում՝ «բանաստեղծներ» (Նիկ., էջ 312), իսկ հայերէնի սկզբում՝ «քերթողաց պատմութիւն»:

Խնդրոյ առարկայ նախակրթութիւնը միակն է «Պիտոյից գրքում», որտեղ յիշատակում են «վեհք» «աստուածները»՝ «դ. Այլեւ անհաւանական է հետեւալը. ի՞նչ հաղորդակցութիւն կարող է լինել աստուածների եւ մարդկային բնութեան միջեւ, որոնք միմեանցից բաժանուած են բնակութեան վայրով: Քանի որ նրանց բաժին են ընկել վերին ոլորտները, իսկ սրանց՝ ստորին, եւ ոչ մի հաւաքում նրանք չեն հաղորդակցում միմեանց հետ, ոչ էլ երբեւիցէ միաւորուած են լինում բարեկամութեամբ» (էջ 61), «դ. Բայց ո՞ւր անհեթեթ չի թուայ այս պատմութիւնը, որում աստուածների զայրոյթն է շարժում. չէ՞ որ նրանց էութիւնը մշտապէս զուրկ է կրքերից: Եւ առաւել եւս, քանի որ նրանք անարդար հրամաններ են արձակում՝ թողնելով մեղաւորներին, իրենց աստուածային զայրոյթն ուղղելով անմեղ երեխաների դէմ» (էջ 62):

Նիոբէի մասին առասպելը շատ յայտնի էր ու տարածուած զանազան տարբերակներով: Նրան անդրադարձել են բազում անտիկ հեղինակներ՝ Հոմերոսն «Իլիականում» (XXIV. 599-620), քնարեր-

գուները, ողբերգակները, հռոմեական բանաստեղծները (Օվիդիոսը «Կերպարանափոխութիւններում»), առասպելահաւաքներն ու պատմիչները, ինչպէս նաեւ նկարիչները<sup>90</sup>: Լիբանիոսի նախակրթութիւնների թւում կա մի բարառնութիւն. «Ինչպիսի՞ խօսքեր կասէր Նիոբէն, երբ նրա զաւակները սպանուեցին» (Լիբ. XI.8), որի ընդօրինակութեամբ է գրուած Աֆթոնիոսի ժողովածուի մէջ պահպանուած նոյն թեմայով բարառնութիւնը (Աֆթ., էջ 102-103): Նիոբէն սովորաբար ներկայանում է որպէս Տանտալոսի դուստր եւ Ամֆիոնի կին, չնայած տարբեր աղբիւրներում որպէս նրա հայր եւ ամուսին տարբեր անձինք են յիշատակուած: Այն տեղեկութեան, որ նա Տանտալոսի կինն էր, բացառիկ վկայութիւն է պահպանուել Հոմերոսի «Իլիականի» սխոլիաններից մէկում<sup>91</sup>: Թւում է, սակայն, որ մեր նախակրթութեան մէջ Տանտալոսի կին լինելը ոչ թէ այդ աւանդութեան արտացոլումն է, այլ պարզապէս շփոթութեան արդիւնք: Նիոբէի զաւակների թիւն էլ տատանում է տասներկուսից մինչեւ քսան: Աֆթոնիոսի նախակրթութեան մէջ խօսուում է միայն հաւասար թուով զաւակների մասին: Հայերէն եղծման վեցն ու վեցը, որի ակունքներն «Իլիականում» են, գտնում ենք Լիբանիոսի բարառնութեան մէջ (Լիբ., էջ 392): Միայն ճաշկերոյթ կազմակերպելու («նպար ընձեռեալ էին») ոչ մի զուգահեռ չյաջողուեց գտնել<sup>92</sup>:

Երկու «եղծման» նախօրինակները չեն պահպանուել:

III.3. «Եղծ գերակլեայ» (Պիտ. էջ 65)<sup>93</sup>:

Եւրիպիդէսի չպահպանուած «Ավգէ» ողբերգութեան<sup>94</sup> սիւժեն է: Ստրաբոնն «Աշխարհագրութեան» մէջ գրում է. «Եւրիպիդէսը պատմում է, որ Ավգէի հայր

Ալէոսը փակեց Ավգէին նրա զաւակ Տելեփոսի հետ միասին արկղի մէջ ու ծովը գցեց, Հերակլեսի գործած պղծութիւնը<sup>95</sup> բացայայտելուց յետոյ: Աթենասի հոգածութեամբ արկղը, կտրելով անցնելով ծովը, յայտնուեց Կաիոսի գետաբերանում: Տելթրասն ընդունեց նրանց՝ մէկին իր կինը դարձնելով, իսկ միւսին՝ սեփական որդին»<sup>96</sup>:

Աւգէի մասին առասպելը հաղորդում են զանազան հեղինակներ, սակայն նրա՝ գիշերային պարին մասնակցելու մասին յիշատակում է միայն Սենեկան. «Իսկապէ՞ս արկղաբերանի կոյս Աւգէն, երբ Պալլասի պարն է պարել, ամօթալի բռնութեան ենթարկուելով, հեռացել է, եւ Հերկուլեսի սիրոյ ոչ մի նշան չունէր»<sup>97</sup>: Ըստ Պաւսանիասի եւ Ապոլլոդորոսի, մայրը Տելեփոսին գցեց Պարթենիոն լեռան մօտ, որտեղ եղնիկը նրան սնուցեց, ինչից էլ, ըստ Ապոլլոդորոսի, նա իր անունը ստացաւ<sup>98</sup>:

Յունական թատերագիրների լրիւ եւ հատուածաբար պահպանուած գործերի՝ Դինդորֆի հրատարակած ժողովածուի մէջ «Պիտոյից գրքի» այս հատուածը բերում է «Աւգէ» ողբերգութեան հատուածներից առաջ՝ որպէս նրան վերաբերող<sup>99</sup>: Իսկ Paulys Realencyclopaedie der classischen Altertumswissenschaft հանրագիտարանում այն վերագրուած է Եւրիպիդէսի մէկ այլ չպահպանուած՝ «Տելեփոս» ողբերգութեանը, որը նրա վաղ գործերից էր<sup>100</sup>: Նոյն յօդուածի հեղինակն անհաւանական է համարում, որ «Աւգէ» ողբերգութեան մէջ Հերակլեսը գտնում է միաժամանակ Աւգէին եւ Տելեփոսին, որոնք մնում են Արկադիայում, քանի որ դա հայկական նախակրթութեան միակ տեղեկութիւնն է, որ այլ աղբիւրներում զուգահեռ չունի<sup>101</sup>. Նրա համոզմամբ, կերպարուեստում յաճախ հանդիպող այն

մոտիւր, թէ Հերակլեսը գտնում է մանուկ Տելեփոսին, հիմնուած է Եւրիպիդէսի վրայ, եւ հետեւաբար, ողբերգութեան մէջ դէպքերը ծաւալուել են աւելի շուտ այնպէս, ինչպէս դա հաղորդել է Ապոլլոդորոսը<sup>102</sup>:

Իրականում հայերէն տեքստից միանշանակ չի հետեւում, թէ Հերակլեսը միանգամից երկուսին է գտել. նա գտնում եւ իր զաւակն է ճանաչում Տելեփոսին, ինչի հետեւանքով երկուսն էլ փրկուում են: Այդ անորոշութիւնը կարելի է բացատրել այն սահմանափակ ծաւալով, որն առասպելը պատմելու համար տրամադրել է նախակրթութեան «բ»՝ «իրացն արտադրութիւն» կէտը: Բացի այդ, «է»՝ «անվայելական» կէտում անվայելուչ է որակում այն պնդումը, թէ Հերակլեսը ինչ-որ մի ցնորուածի պէս ճանապարհորդել է անապատով, «զի ոչ յառաջգիտութեան ինչ ունէր ծանօթութիւն յաղագս զՏելեփոսն բառնալոյ» (էջ 67), եւ ոչ մի խօսք Աւգէի մասին:

Նման բովանդակութիւն պէտք է ունեցած լինէր եւ նրա նախօրինակն Աֆթոնիոսի նախնական ժողովածուի կազմում:

Հետաքրքրական է, որ «ա» կէտում, բացի ընդհանուր «բանաստեղծներ» բնորոշումից, այս առասպելը պատմող որեւէ կոնկրետ հեղինակ չի յիշատակում:

Այն, որ «անդնդասոյց կորստեամբ» («ծովանդունդը գցելով») խօսքերը ծովն են ակնարկում, երեւում է «գ»՝ «անյարմարական» կէտից. «զոմն գազանաց ընկենուլ կուր, եւ զոմն ծովավէժ սատակմամբ բառնալ» (էջ 67.13): «Ի վեր բառնայր» («բարձրացրեց») համապատասխանում է յունարէն ἀναίρεω բային, որը նշանակում է «բարձրացնել նորածին մանկանը՝ իրենը ճանաչելով»:

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ  
ՀԱՄԱՐ  
506-2015

III.4. «Եղծ զՄեղեայ» (Պիտ. էջ 68)<sup>103</sup>.

Այս նախակրթութեան հիման վրայ փորձել են վերականգնել Եւրիպիդեսի չպահպանուած «Պելիադներ» («Պելիասի դուստրեր» ողբերգութեան սիւժէն)<sup>104</sup>:

Նիկողայոսի ժողովածուի մէջ պահպանուել է Աֆթոնիոսի գրած մէկ այլ Մեղէայի «եղծում» VI.9. 'Ανασκευή ὅτι οὐκ εἰκότα τὰ κατὰ Μηδείαν (Նիկ., էջ 312), որում արծարծուում է Մեղէային նուիրուած առասպելի մէկ այլ մասը. թէ ինչպէս Եասոնը գալիս է ոսկէ գեղմը տանելու, Մեղէան սիրահարուում է Եասոնին եւ օգնում նրան կատարել իր հօր դրած պայմանը՝ վիշապի ատամներ ցանել եւ յաղթել դրանցից բուսած ռազմիկներին, Եասոնը ստանում է գեղմը, իսկ Մեղէան գնում է նրա հետ Յունաստան՝ սպանելով իրենց հետապնդող եղբորը: Որեւէ կոնկրետ հեղինակ չի յիշատակուում, այլ միայն «բանաստեղծները»: Հետեւաբար Աֆթոնիոսը պէտք է գրած լինէր նոյն վերնագրով մէկ այլ «եղծում», որը եւ հայ հեղինակի համար նախօրինակ է ծառայել:

Այսպիսով, անտիկ իրականութեանն ու գրականութեանն առնչուող նախակրթութիւններն ամփոփուած են «Պիտոյից գրքի» առաջին երեք գրքում: Դրանք բոլորը գրուած են Աֆթոնիոսի նախակրթութիւնների ընդօրինակմամբ. վերջիններս մեծ մասը պահպանուել է առանձին ժողովածուի ձևով, որ վերագրուած է 5-րդ դարի ճարտասան Նիկողայոս Միւռացուն<sup>105</sup>, մի քանիսն էլ մտել են Աֆթոնիոսի ուսուցիչ՝ Լիբանիոսի ճարտասանական վարժութիւնների ժողովածուի մէջ (ի դէպ, շփոթութիւնը հասցրել է այն բանին, որ երբեմն նոյն վարժութիւնն առկայ է երկու ժողովածուի մէջ էլ): Իսկ Աֆթոնիոսի ժողովածուն խմբագրուել ու

համառօտուել է, այնպէս որ իւրաքանչիւր տեսակի համար (մէկ բացառութեամբ) մնացել է մէկական նմոյշ-վարժութիւն: Խմբագրման փաստն ակնյայտ է դառնում սահմանումների տեքստն իրենց հայերէն թարգմանութեան հետ համեմատելիս. Աֆթոնիոսից շեղուող հայերէն ընթերցումների մի որոշ մասը հաստատուում է նրա աղբիւրների՝ Հերմոգենիսի եւ Թէոնի նախակրթութիւնների, առանձին դէպքերում էլ՝ Աֆթոնիոսի մեկնաբանների ընթերցումներով: Բերենք մի քանի օրինակ:

«Պէտքի» սահմանման մէջ կարդում ենք. «կենցաղոյս օգտակարագոյն» (էջ 30.3-4), իսկ Աֆթոնիոսի մօտ՝ χρεώδης (էջ 62.15 «օգտակար»), սակայն Թէոնի մօտ համապատասխան տեղում գտնում ենք βιωφελής (էջ 86), որը Փիլոնի երկերում թարգմանուել է «կենցաղօգուտ» (տեսական 22-148, իմաստ. 59-54) եւ «կենցաղոյս օգտակարագոյն» (ժ բան 243-VII.44, բազն. 215-VII.294): Հետեւաբար, Աֆթոնիոսի նախնական բնագրում պէտք է եղած լինէր βιωφελής ընթերցումը:

«Խրատի» սահմանման մէջ, բուն սահմանումը տալուց յետոյ եւ նրա տարատեսակների համար օրինակներ բերելուց առաջ, Աֆթոնիոսը թուարկում է այդ տարատեսակները՝ «խրատը կարող է լինել յորդորող, հրաժարեցնող եւ ազդարարող, նաեւ՝ պարզ ու բաղադրեալ, նաեւ՝ համոզող, ճշմարիտ ու չափազանցական» (էջ 67.2-5): Այդ թուարկումը բացակայում է ինչպէս «Պիտոյից գրքում» (էջ 44), այնպէս էլ Հերմոգենիսի<sup>106</sup> մօտ (էջ 8), հետեւաբար Աֆթոնիոսի մօտ այն ուշ ներմուծութիւն է:

«Ընդհանուր տեղիի» սահմանման մէջ «որ սեղանակապտին է բան» (էջ 71.4-5) համապատասխանում է Աֆթո-

նիոսի ὁ κατὰ προδότην λόγος-ին (էջ 81.1-2 «դաւաճանի դէմ ճառ»), իսկ Հերմոգենիսն օրինակ է բերում ιεροσολος-ին (էջ 12.1), որի թարգմանութիւնն է հայերէն բառը<sup>107</sup>: Կարող ենք վերականգնել Աֆթոնիոսի նախնական ընթերցումը՝ \*ὁ κατὰ ιεροσόλου λόγος:

«Բաղդասութեան» սահմանման վերջին նախադասութիւնը՝ «վասն զի արագագոյն ճարտասանի պէտս ունի առ այսպիսուոյս ձեռնարկութեան արուեստ» (էջ 154.1-2), զուգահեռ չունի Աֆթոնիոսի մօտ (հմմտ. էջ 97), սակայն Հերմոգենիսի մօտ գտնում ենք՝ ἀπατεῖ δὲ τὸ τοιοῦτο βίαιον ῥήτορα καὶ δεινότητα, δεῖται δὲ καὶ γοργότητος ἢ ἐργασία πανταχοῦ διὰ τὸ δεῖν ταχείας ποιεῖσθαι τὰς μεταβάσεις (էջ 20.2-5) «այն պահանջում է զօրեղ ճարտասան եւ [խօսքի] ուժգնութիւն, իսկ շարադրանքը պէտք է միշտ աշխոյժ լինի, քանի որ անհրաժեշտ է արագ անցումներ կատարել»: Անշուշտ, Աֆթոնիոսի մօտ եղել է այս մտքի վերամշակուած տարբերակը, որն էլ վկայուած է թարգմանութեամբ<sup>108</sup>:

«Բարառութեան» մի տարատեսակը «դիմառնութիւնն» է. «Եւ դիմառնութիւն ուրանօր զբարսն միանգամայն եւ զդէմս ստեղծանեմք, որպիսի. «Զի՞նչ արդեօք ասիցէ բանս ծով՝ ծովակալ եղելոց լակեղմոնացւոց»: Աստ զդէմսն ստեղծանեմք խօսել, քանզի ծով ոչ բնաւորեցաւ խօսել, եւ զբարսն նորին տարակուսեալ, թէ ունիցին զնա միջերկրեայք, որպէս Արիստիդէս արար, եւ Մենանդրոս ի դէմս դից ստեղծանելով զյանդիմանութիւնն» (184.10-15): Աֆթոնիոսի համապատասխան հատուածը բաւական տարբեր է ու համառօտ. προσωποποιία δὲ, ὅταν ἅπαντα πλάττηται, καὶ ἦθος, καὶ πρόσωπον, ὥσπερ ἐποίησε Μένανδρος ἔλεγχον. (101.12-15) «եւ դիմառնութիւն է, երբ ամէն ինչն է յօ-

րինուում՝ ե՛ւ բարքը, ե՛ւ դէմքը, ինչպէս Մենանդրոսն արեց Յանդիմանութիւնն»: Իսկ Հերմոգենիսը գրում է ծովի խօսելու մասին. προσωποποιία δὲ, ὅταν πράγματι περιτιθῶμεν πρόσωπον, ὥσπερ ὁ Ἐλεγχος παρὰ Μένανδρω καὶ ὥσπερ παρὰ τῷ Ἀριστείδῳ ἢ θάλασσα ποιεῖται τοὺς λόγους πρὸς τοὺς Ἀθηναίους (էջ 20.9-12) «եւ դիմառնութիւն է, երբ դէմքով ենք օժտում իրը, ինչպէս Յանդիմանութիւնը Մենանդրոսի մօտ, եւ ինչպէս Արիստիդեսի մօտ յօրինուած է, թէ ինչպէս ծովը ճառով դիմում է աթենացիներին»<sup>109</sup>:

«Դրութեան» սահմանման մէջ «տեսական դրութեան» օրինակներից մէկն է «եթէ հոգի անմա՞հ» (էջ 221.16)՝ Աֆթոնիոսի εἰ κόσμοι πολλοί-ի (էջ 108.21) դիմաց: Այն, որ նրա սկզբնական բնագրում եղել է մեր օրինակի համարժեքը՝ εἰ ἀθάνατος ἢ ψυχῆ, վկայում է դրա առկայութիւնն Աֆթոնիոսի մի ուշ ընդօրինակողի՝ Մատթէոս Կամարիոսի մօտ<sup>110</sup>:

Այս կարգի խմբագրման են ենթարկուել Աֆթոնիոսի սահմանումները. իհարկէ, միշտ չէ, որ թարգմանութիւնն ու աղբիւրները համընկնում են եւ օգնում վերականգնել նախնական ընթերցումները<sup>111</sup>: Կան նաեւ դէպքեր, երբ Աֆթոնիոսի ընթերցումը հաստատուում է, ասենք, Հերմոգենիսով, եւ պէտք է եզրակացնել, որ փոփոխութեան է ենթարկուել հայերէն տեքստը<sup>112</sup>:

Նմանօրինակ իրաւիճակ կարող ենք մատնացոյց անել եւ նախակրթութիւններում: «Եղծ զՆեովբայ» (III.1) մէջ յիշատակուող Նիոբէի վեց որդիների եւ վեց դուստրերի մասին տեղեկութիւնը, ի հակադէմ Աֆթոնիոսի մօտ հանդէս եկող զաւակների մեծ թուի, որ վերջ ի վերջոյ սերում է Հոմերոսի «Իլիականից», առկայ է Լիբանիոսի մի բարառութեան մէջ, ինչն ստիպում է ենթադրել, որ Աֆթո-

նիստի տեքստի նախնական տարբերակում էլ այդ տեղեկությունն առկայ է եղել: Հետեւաբար, հայերէն նախակրթութիւնների այնպիսի մանրամասներ, ինչպէս Դիոգենէսի՝ կինիկների փիլիսոփայական դպրոցի ներկայացուցիչ լինելը (I.1), Պիլթագորասի՝ եգիպտոս կատարած ճանապարհորդութիւնը, այնտեղ սովորելն ու այդ գիտելիքները յունարէնի փոխադրելը (I.5), ողբերգութիւնները յամբական չափով գրելու սովորութիւնը (II.6), Նիոբեի՝ վեց որդի ու վեց դուստր ունենալը, գուցէ նաեւ Տանտալոսի կինը լինելն ու սպանդից առաջ ճաշկերոյթ կազմակերպելը (III.1), Գիգեսի՝ Կանդակեսի մարտակից («Թիկնապահ») լինելը (III.2) կարող էին յիշատակուած լինել Ափթոնիոսի մօտ, նրա տեքստի խմբագրումից առաջ:

Սրանց մի մասը կարող էր հեղինակի ընդհանուր գիտելիքների, մի մասն էլ, ինչպէս արդէն նշուել է, շփոթութեան արդիւնք լինել (Նիոբեի՝ Տանտալոսի կինը, եւ ոչ թէ՛ դուստրը, լինելը, եւ ճաշկերոյթ կազմակերպելը):

Աւելի մեծ շփոթութեան հետեւանք են Սոկրատէս-Իսոկրատէսի մասին պետքում (I.3) Իսոկրատէսին քիչ համապատասխանող, իսկ Սոկրատէսի կեանքի հանգամանքները միայն մասնակիորէն յիշեցնող կենսագրական տուեալները եւ Թէոգենիսի խրատի (II.3) վերագրուելը Բիաս իմաստակին, որոնց համար առայժմ դժուարանում ենք բաւարար բացատրութիւն գտնել:

«Պիտոյից գրքում» կա եւս մի անտիկ սիւժէ՝ վերջաբանում պատմող առակը: Վերջաբանը, ինչպէս նաեւ յաւելուածի երեք «բարառութիւնները», հետազօտողներն իրաւացիորէն ուշ յաւելում են համարել՝ հենուելով լեզուական կռուանի վրայ: Ղրանց լեզուն ու ոճն էլ աւելի խրթին են, քան մնացած տեքստերը:

րինը, յիշեցնելով Թէոդորոս Քոթենաւորի ճառերի լեզուն<sup>13</sup>:

Զօհրապեանը համեմատել է այստեղ պատմող առակը Նոննոսի «Յաղագս ճաի եւ թեւոյն հաւաքման» առասպելի հետ<sup>14</sup>, Բառմաբարտները որպէս զուգահեռ յիշատակել է Լիբանիոսի I.3 նախակրթութիւնը («առակ» բաժնից), նշելով, որ Ղրանք ոչ մի դէպքում չեն նոյնանում<sup>15</sup>: Մենք կարծում ենք, որ այն ամէնից մօտ է Ողոմպիանոսի առակին<sup>16</sup>, հետեւաբար վերջաբանի հեղինակը, հնարաւոր է, օգտուել է այդ ժողովածուից:

Այսպիսով, «Պիտոյից գրքն» իր՝ նախորինակի՝ Ափթոնիոսի նախակրթութիւնների համեմատ խիստ քրիստոնէացուած ճարտասանական ձեւերով է: Այնուամենայնիւ, անտիկ հեղինակութիւնների ասոյթներն ու գրական սիւժէները, ճիշտ է, նախորինակի համեմատ սահմանափակ են, սակայն ամբողջովին հանուած չեն նրանից՝ կազմելով տասը գրքերից երեքի նիւթը: Դասական թեմաներին նուիրուած նախակրթութիւններն էլ, քրիստոնէացուած լինելով հանդերձ, պահպանել են որոշ մանրամասներ, որոնք չկան նախորինակներում եւ վկայում են Ղրանց խմբագրուած լինելու մասին: Աւելին, այդ նախակրթութիւններից մի քանիսի յունարէն նախորինակները պարզապէս չեն պահպանուել, սակայն այլ յունական տեքստերում եւ, մասնաւորապէս, ասոյթների ժողովածուներում կամ յունական ճարտասանական աւանդութեան մէջ առկայ զուգահեռները հաստատում են, որ Ափթոնիոսի նախնական ժողովածուն անպայման պարունակել է այդ թեմաներն արծարծող նախակրթութիւններ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 Л. Л. Фрейберг, "Византийская поэзия IV-X вв. и античные традиции", *Византийская литература* (сб. статей), Москва, 1974, с. 46.

- 2 G. A. Kennedy, *Classical Rhetoric and its Christian and Secular Tradition from Ancient to Modern Times*, Chapel Hill, 1980, pp. 161-163.
- 3 G. A. Kennedy, *Greek Rhetoric under Christian Emperors*, Princeton, New Jersey, 1983, p. 48.
- 4 H.-G. Beck, "Antike Beredsamkeit und byzantinische Kallilogia", *Antike und Abendland* 15, 1969, S. 93.
- 5 «Եօթ ազատ արուեստների» բաժանումը երկու փուլի՝ trivium եւ quadrivium (քառեակ գիտություններ), վերջնականապէս ձեւակերպել է Արեւմտացի կարկառուն փիլիսոփայ Սեւերինոս Բոնցիուսը 5-րդ դարում. տե՛ս В. И. Уколова, *Античное наследие и культура раннего средневековья*, Москва, 1989, с. 34, սակայն Արեւելքում եւս առաջնորդուել են մասօրինակ ծրագրով, տե՛ս G. A. Kennedy, *Classical Rhetoric and its Christian and Secular Tradition from Ancient to Modern Times*, p. 163.
- 6 С. С. Аревшатян, *Формирование философской науки в древней Армении (V-VI вв.)*, Ереван, 1973.
- 7 Ծարտասանական վարժութիւնների մասին մի տրակտատ մ. թ. 1-ին դարում գրել է Թէոն Աղեքսանդրացին (յունաբան թարգմանիչներն այն թարգմանել են հաւանաբար աւելի ուշ՝ տե՛ս Թէոփանայ Յաղագս ճարտասանական կրթութեանց, հանդերձ յոյս բնագրով, աշխատութեամբ Յ. Մանանդեանի, Երեւան, 1938, յունարէն բնագրի նորագույն հրատարակութիւնը, որում հայերէն թարգմանութեան օգնութեամբ վերականգնուած են կորսուած գլուխները, տե՛ս Aelius Theon, *Progymnasmata, texte Établi par M. Patillon, avec l'assistance, pour l'Armenien de G. Bolognesi, Paris, Les Belles lettres, 1997*), 2-րդ դարում Հերմոգենէսը գրել է նախակրթութիւնների հրահանգներ՝ դպրոցի համար, որոնք համառօտելով, դարձնելով աւելի դիւրեւորելի եւ օժտելով օրինակներով, իր ձեռնարկն է կազմել Աֆթոնիոսը, ինչի համար նրան դրուատել են նրա հետագայ մեկնիչներից շատերը (հմմտ. *Prolegomenon Sylloge*, ed. H. Rabe, Lipsiae, 1931, p. 79՝ Անանուս, p. 140՝ Ioannes Doxopater, p. 157՝ Ioannes Argyporus): Վարժութիւնների տեսակները սահմանելիս (Հերմոգենէսի 12-ի դիմաց նամի 14) Աֆթոնիոսն ամենայն հաւանականութեամբ հետեւել է իր ուսուցիչ Լիբանիոս Անտիոթեամբ հետեւել է իր ուսուցիչ Լիբանիոս Անտիոթեամբ, որի անունով տասնչորս տեսակի նախակրթութիւնների մի ընդարձակ ժողովածու է պահպանուել՝ առանց տեսական մասերի: Տասնհինգերորդ դարի վերջին Ռուդոլֆ Ագրիկոլան ձեռնարկը թարգմանել է լատիներէնի, ապահովելով նրա լայն կիրառութիւնը Արեւմտեան Եւրոպայում:
- 8 Այդ իրողութիւնն ապացուցուել է Աֆթոնիոսի եւ Նիկողայոսի ժողովածուների բովանդակային ու լեզուական մասնութեան եւ տեքստային զուգահեռների առկայութեան հիման վրայ (RE, Bd XVII<sub>1</sub>, 1936, Kol. 454-457, s.v. "Nikolaos von

- Myra" (Stegemann)) եւ հաստատուել այդ տեքստերին յատուկ դիմել կառուցուածքի ուսումնասիրութեամբ (W. Hörandner, *Der Prosarhythmus in der Rhetorischen Literatur der Byzantiner*, Wien, 1981, S. 60, 65-66):
- 9 RE, Bd XII<sub>2</sub>, 1925, Kol. 2518-2522, s.v. "Libanios" (Förster-Münsher).
- 10 G. L. Kustas, *Studies in Byzantine Rhetoric*, Thessaloniki, 1973, p. 23; G. A. Kennedy, *Greek Rhetoric under Christian Emperors*, p. 54.
- 11 Տե՛ս Աֆթոնիոսի նախակրթութիւնները (Aphthonii Progymnasmata) հետեւելով հրատարակութեան մէջ՝ Ch. Walz, *Rhetores Graeci*, vol. I, Stuttgartiae, 1832, pp. 59-120.
- 12 «Պիտոյից գրքի» նախակրթութիւնների՝ Աֆթոնիոսի մօտ պահպանուած երկու նախօրինակներից մէկն է. հմմտ. «Խրատ 3. Արծան է լաղքատութեան փախչել, եւ ի մեծն անկանել ծով, եւ կամ ի վիմաց հոսիլ ի բարձանց»:
- 13 Նոյնպէս նախօրինակ է ծառայել հայ ընթօրինակողի համար (Դրոյթիւն 1):
- 14 Տե՛ս Նիկողայոսի նախակրթութիւնները (Nikolai Progymnasmata) հետեւելով հրատարակութեան մէջ՝ Ch. Walz, *Rhetores Graeci*, vol. I, pp. 262-420; տե՛ս Լիբանիոսի նախակրթութիւնները (Libanii Progymnasmata)՝ *Libanii opera*, ed. Foerster, vol. VIII, Lipsiae, 1915.
- 15 R. Browning, "Byzantinische Schulen und Schulmeister", *Das Altertum*, Bd 9, 1963, S. 108.
- 16 Kustas, op. cit., p. 24.
- 17 Նոյն տեղում, էջ 25, ծմբ. 1. հեղինակը ենթադրում է, որ դասական եւ քրիստոնէական հետաքրքրութիւնների միաձուլման համար ճանապարհ է հարթել պատկերամարտութեան շուրջ վէճերի ասարտը: Այդ գործընթացը նա կապում է նաեւ Կապադովկեան հայրերի՝ որպէս քրիստոնէական դասականների ընկալման ձեւատրման հետ:
- 18 Տե՛ս Գիրք պիտոյից, աշխատասիրութեամբ Գ. Մուրադեանի, Երեւան, 1993, *Книга хрий*, перевод с древнеармянского, предисловие и комментарии Г. Мурадян, Ереван, 2000.
- 19 Н. Адонц, *Дионисий Фракийский и армянские толкователи*, Петроград, 1915, բացի մէկ՝ Երակղէս օրինակից՝ Յօւմձ, Λουκάς-ի դիմաց (էջ 39), հմմտ. նաեւ Հովերոսի յիշատակումը եւ մէջքերումը նրանից (էջ 4), եւ Պատրիկոսի անունը մէջքերման կազմում (էջ 11):
- 20 Նոր կտակարանում՝ «Յակովբոս Չերեղեայ եւ Յովհաննոս երթորն Յակովբայ՝ եղ անցա անուանս Բաներեգէս, որ է Որդիք որոտման», Մրկ. Գ 18:
- 21 Տե՛ս Գ. Մուրադեան, «Օտար անունների արտալայտումները յունաբան թարգմանութիւնների մէջ», *Աշտանակ (Հայագիտական պարբերագիրք)*, Ա, Երեւան, 1995, էջ 159:
- 22 Տարբերութիւնը վերջ թուարկած դէպքերից բացարձակ է այն հանգամանքով, որ ճարտասան

մական ձեռնարկներում օրինակներն իրենց ծա-  
ւայով անհամեմատելիօրէն ընդարձակ են տե-  
սական մասերից:

- 23 Երեքն էլ համապատասխանում են «անձն» տա-  
րատեսակին՝ «Ներքողեան Մովսէսի» (V.1),  
«Պարսաւ Աբետողոմայ» (VI.1), «Բաղդատու-  
թիւն Աբրահամու եւ Եղիայի» (VII.1):
- 24 «Զի՞նչպիսի բանս ասէր Ադամ ելանելով ի  
դրախտէն» (VIII.1), «Զի՞նչպիսի բանս ասասցէ  
Յովսէփ վաճառելովն յեղբարցն» (VIII.2),  
«Զի՞նչպիսի բանս ասասցէ Դաիթ յորժամ գԳո-  
ղիաթ եսպան» (VIII.3), «Զի՞նչպիսի բանս աս-  
սացէ Պողոս ի շրտնու պաշաց» (VIII.4), «Զի՞նչ-  
պիսի բանս ասասցէ Պետրոս զկնի ուրանայոյն  
զտէր» (VIII.5), «Զի՞նչպիսի բանս ասասցէ Յոր-  
դանէս բաժանելու Յեղիայէ» (VIII.6):
- 25 «Արտասանութիւն Աբրահամու, յորժամ գչորսն  
վանեաց թագաւորս» (IX.1), «Արտասանութիւն  
ժողովրդեանն ընդ ծովն անցանելոյ» (IX.2), «Ար-  
տասանութիւն միայնամարտութեան Դաիթի եւ  
Գողիաթու» (IX.3), «Արտասանութիւն գիշերա-  
մարտութեան Գեղէնի առ մադիանացիսն»  
(IX.4):
- 26 «Հասարակ տեղի յաղագս հողկանարի» (IV.4),  
«Հասարակ տեղի յաղագս գերեզմանակրկտի»  
(IV.5), «Ներքողեան պատերազմի» (V.4), «Ներ-  
քողեան աղանոյ» (V.5), «Պարսաւ ձիոյ» (VI. 2),  
«Պարսաւ լեռին» (VI.3), «Բաղդատութիւն մշա-  
կութեան եւ զհնուորութեան» (VII.2), «Բաղդա-  
տութիւն գարնայնոյ եւ ամարայնոյ» (VII.3),  
«Բաղդատութիւն անդաստանի եւ անախանգս-  
տի» (VII.4), «Բաղդատութիւն ձիոյ եւ արջատոյ»  
(VII.5):
- 27 Հմմտ. Լիբանիոսի մօտ (նշ. հրատ., էջ 65-66).  
«դիտարկենք... համաձայն ժամանակների, ո-  
րոնցում մարդկանց վիճակում է ապրել...  
Մարդկանց գործերը երկու ժամանակ են տնօրի-  
նում, եւ մկատի ունեն խաղաղութիւնն ու պատե-  
րազմը»: Հմմտ. նաեւ «Դրութիւն 2. Եթէ պարս-  
պելի՞ է». «զերկուս ժամանակս կրթեալ ածէ  
զմարդիկ ի չորից առաքինութեանցն հանդէս. ի  
խաղաղութեան ժամանակի յիմաստութեան եւ  
յողջախոհութեան, եւ ի պատերազմականին՝ յա-  
րութիւն եւ յարդարութիւն» (էջ 230):
- 28 «Ներքողեան» (V), «Պարսաւ» (VI) եւ «Բաղդա-  
տութիւն» (VII) բաժիններում նախակրթութիւն-  
ների թեմաներն ընտրուած են համաձայն «ներ-  
քողելի է զդէմս, եւ զիրս, եւ զժամանակս, եւ զտե-  
ղիս, զանբան կենդանիս եւ զժառս» (էջ 95.3-4,  
նոյնը պահանջում է միւս երկու տեսակների հա-  
մար) պահանջի: Երեք դէպքում էլ «դէմքերն»  
Աստուածաշնչից են՝ «Ներքողեան Մովսէսի»  
(V.1), «Պարսաւ Աբետողոմայ» (VI.1), «Բաղդա-  
տութիւն Աբրահամու եւ Եղիայի» (VII.1): «Ի-  
րերն» են՝ «Ներքողեան պատերազմի» (V.4),  
«Պարսաւ նաարկութեան» (VI.5), «Բաղդատու-  
թիւն մշակութեան եւ զհնուորութեան» (VII.2),  
«ժամանակներն» են՝ «Ներքողեան գարնայնոյ»

- (V.3), «Բաղդատութիւն գարնայնոյ եւ ամարայ-  
նոյ» (VII.3) (պարսաւ չկայ), «տեղիները»՝ «Պար-  
սաւ լեռին» (VI.3), «Բաղդատութիւն անդաստա-  
նի եւ անախանգստի» (VII.4) (ներքողեան չկայ),  
«կենդանիներն» են՝ «Ներքողեան աղանոյ»  
(V.5), «Պարսաւ ձիոյ» (VI.2), «Բաղդատութիւն  
ձիոյ եւ արջատոյ» (VII.5), «բոյսերն» են՝ «Ներքո-  
ղեան ձիթենոյ» (V.2), «Պարսաւ որթոյ» (VI.4),  
«Բաղդատութիւն ձիթենոյ եւ արմաւենոյ» (VII.6):
- 29 Յիշատակում է «Եղծումն» տեսակի սահման-  
ման վերջում. «ամենայն արուեստիս զօրութիւն  
եղծմամբ եւ ստեղծմամբ դատեալ լինի» (էջ  
60.11-12):
- 30 14-րդ՝ «Օրէնքի առաջարկում» տեսակի զանց  
առնուելը նոյնպէս հասկանալի է. եթէ յունական  
միջավայրում կայսրութեան պայմաններում օ-  
րէնք առաջարկելը ժամանակավրէպ երեւոյթ էր,  
սպա դա գոնէ առնչում էր սեփական ժողովրդի  
պատմական անցեալին (Աթէնքի ժողովրդավա-  
րութեան շրջանի), իսկ հայկական իրականու-  
թեան համար դա իսպառ անհասկանալի էր: 1-  
ին՝ «Առակ» (μῦθος) տեսակի բացակայութիւնը  
«Պիտոյից գրքում» Ն. Մառը փորձել է բացատ-  
րել այն հանգամանքով, որ առակները մեծ ժո-  
ղովրդակամութիւն են վայելել եւ առանձնացուել  
«Առակք Ողոմայիանու» ժողովածուի տեսքով (H.  
Mapp, *Сборники притч Вардана*, кн. I, СПб,  
1893, с. 434-435), մինչդէռ Ա. Բաումգարտները  
ժամանակին ենթադրել էր, որ ձեռնարկը  
սկզբնապէս ունեցել է մի առաջաբան եւ առաջին  
երկու «Առակ», «Պատմութիւն» գրքերը, որոնք  
հետագայում կորել են (A. Baumgartner. "Über  
das Buch 'Die Chrie'", *ZDMG*, XL, S. 463), ընդ ո-  
րում, քանի որ Աստղիկի այն խօսքերը, թէ «այսմ  
ժամանակի էր մեծ փիլիսոփոսն հայոց Մովսէս,  
որ զճարտասանական արուեստ ի գործ առնու ի  
հայս» (*Ստեփաննոսի Տարօնեցոյ Աստղիկն  
Պատմութիւնն տիեզերական*, ՍՊԹ, 1885, էջ 82),  
Բաումգարտների կարծիքով հիմնուած են «Պի-  
տոյից գրքի»՝ Մովսէս քերթողի անուանից գրուած  
վերջաբանի վերնագրի վրայ («ներակրթի վար-  
ժիք յիմաստս ճարտասանական արհեստիս», էջ  
247), որեւմ առաջաբանն այդ ժամանակ, այ-  
սինքն մինչեւ 1004 թ. արդէն կորած պիտի լինէր  
(S. 465): Նա համարում է նաեւ, որ գրքի առաջա-  
բանի որ նրա մօտ յիշատակուող Թէանոյի, Սողոմի  
եւ Լիկուրոսի խօսքերը (*Պատմութիւն Սեբէոսի*,  
աշխատասիրութեամբ Գ. Աբգարեանի, Երեւան,  
1989, էջ 159) միեւնոյն աղբիւրից են ծագում, այն  
է՝ «Պիտոյից գրքի» առաջաբանից (էջ 468-469),  
որեւմ այդ առաջաբանը կորել է 7-րդ դարի եւ  
1004 թ.-ի միջեւ: Ընդ տ, հեղինակը գկատել է,  
որ վերջաբանի վերնագրում «Մովսէսի քերթողի  
արարողի Պիտոյիցս տառի» խօսքերի գոյութիւ-  
նը հակասում է գրքի սկզբնամասը կորած լինե-  
լու վարկածին, սակայն ըստ նրա այդ վերնագի-  
րը կարող էր եւ անելի ուշ գրուած լինել (էջ 464):

- 31 Այդ երկու տեսակի վարժութիւնները նոյն կառու-  
ցուածքն ունեն, այն տարբերութեամբ, որ պէտքի  
դէպքում ասոյթը սկսում է հեղինակի անուան յի-  
շատակումով, իսկ խրատի դէպքում անունը չի  
յիշատակում, սակայն բոլոր դէպքերում այդ ա-  
նունները յայտնի են դառնում քննարկման հենց  
առաջին՝ «աստղիս գովութիւն» կէտում:
- 32 Հաւանաբար սօսի անունը թարգմանիչը շփոթել  
է ո՞ Յεσμοφορεῖον բառի հետ, որը նոյն աս-  
տուածունու տաճարի անուանումն էր (այդպէս է  
Թէոնի մօտ, Aelius Theon, p. 20 (98.5), եւ թարգ-  
մանութեան մէջ պարզապէս տառադարձուած է  
«Թեամփորոն», *Թէոփնէայ*, էջ 37):
- 33 Ի դէպ, հին «Բանք իմաստասիրացի» միակ հրա-  
պարակում տարբերակում գտնում ենք Աֆթո-  
նոսի ժողովածուի մէջ պահպանուած վերոյի-  
շեալ «պէտքի» թարգմանութիւնը. սակայն Իսկ-  
րատեան այստեղ փոխարինում է Դեմոսթենէ-  
սով. «Դեմոսթենէս զարմատ խրատուն դառն ա-  
ւեր եւ զպտուղն քաղցր» (*Սոփիերը հայկականք...*,  
Ա. Վեճեփիկ, 1853, էջ 10): Գոյութիւն ունի նաեւ  
17-րդ դարում լեհերէնից հայերէն թարգմանուած  
մէկ այլ անանատիկ ժողովածու, տե՛ս *Բանք ի-  
մաստասիրաց*, աշխատասիրութեամբ Քնարիկ  
Տէր-Գալթեանի, Երեւան, 2001:
- 34 Աֆթոնոսի նախօրինակներում վկայակոչում է  
օրէնքը (VII.1՝ մատնչի մասին, էջ 321, VII.3՝  
շնացողի մասին, էջ 325):
- 35 Աֆթոնոսի մօտ ձիթենին սերում է Աթենասից  
(Նիկ. VIII.4, 334), գարունը՝ Քրոնոսից (VIII.1  
331), խաղողի որթը՝ Դիոնիսոսից (Նիկ. IX.3, էջ  
343), նաարկութիւնը՝ Պոսեյդոնից (Նիկ. IX.6, էջ  
347), ձիթենին Աթենասից, արմաւենին՝ Ապոլլո-  
նից (Նիկ. IX.7, էջ 368), ցուլը՝ Դեմետերից (Նիկ.  
IX.3, էջ 332) եւ այլն:
- 36 Աֆթոնոսի «Ի՞նչ խօսքեր կասեր ցամաքի բնա-  
կիչն առաջին անգամ ծով տեսնելով» (Նիկ. XI.9,  
էջ 389) նախակրթութեան վերջաւորութիւնը, որ-  
տեղ ցամաքի բնակիչը դիմում է Պոսեյդոնին եւ  
Դեմետերին, որեւէ զուգահեռ չունի 7-րդ բարաո-  
նութեան մէջ (էջ 200):
- 37 IV.1.թ էջ 75.15-16 (ակնարկում է Հոնմ. ԺԳ 4),  
2.է էջ 78.21-22 (ակնարկում է Ծճճ. Թ 6), V.3.ժա  
էջ 111. 18-21 (հմմտ.Առակ. Զ 8), Ժք էջ 111.29  
(Ծճճ. Ա 22), 4.գ էջ 114.32-33 (ակնարկում է Յե-  
սու Ե 13), էջ 115.1 (ակնարկում է Ամբակ. Գ 8),  
115.2-3 (մէջբերում է Ելք ԺԳ 24), դ էջ 115. 6-7  
(ակնարկում է Ծճճ. ԺԳ եւ Ա Թագ. Ժէ 42-57),  
VI.2.ժ էջ 132.30-31 (հմմտ. Սաղմ. ԼԱ 9), Ժգ էջ  
133.17-18 (մէջբերում է Երեմ. Ե 8), 3.դ էջ 136.13-  
14 (ակնարկում է Առակ. Ը 23-25), Ժէ էջ 140.4-6  
(ակնարկում է Սաղմ. ԽԹ 10, ԾԳ 18), 4.ժ էջ  
145.7 (հմմտ. Եփես. Ե 18), Ժք էջ 145.18-19 (մէջ-  
բերում է Եսայ. Ե 11), Ժդ էջ 146.2-3 (ակնարկում  
է Փիլիպ. Գ 19), VII.2.գ էջ 160.17-18 (ակնարկ-  
ում է Ծճճ. ԺԳ), 3.ժգ էջ 168.12-13 (ակնարկ-  
ում է Ծճճ. Ը 13), 13-14 (Ելք. ԺԲ 2) bis, 4.ժէ1 էջ  
172-173 (ակնարկում է Ծճճ. Իէ 27), 5.ժէ1 էջ

- 178.5-6 (մէջբերում է Ամբակ. Գ 8), Ժք էջ  
178.23-25 (ակնարկում է Օրին. Է 20 եւ Յեսու  
ԻԳ 12), 6.ժգ էջ 183.2 (մէջբերում է Սաղմ. ՂԱ  
13), 183. 3-4 (մէջբերում է Երգ է 9) , Ժզ էջ  
183.7-8 (ակնարկում է Սաղմ. ԾԱ 10), 8-9 (ակ-  
նարկում է Սաղմ. ԾԻէ 3), X.3.ա էջ 233.24 (ակ-  
նարկում է Իմաստ. ԺԳ 3):
- 38 Դրանք են՝ «Իսկրատեան ասում էր, որ ուսման  
արմատը դառն է, իսկ պտուղը՝ քաղցր» (Աֆթ.,  
էջ 63), «Երբ Դիոգենէսին, որը Լակեդեմոնից ու-  
ղեւորում էր Աթէնք, մէկը հարցրեց, որտեղի՞ց  
եւ ո՞րն էս գնում, նա ասաց. տղամարդկանց հար-  
կաբաժնից՝ կանանց հարկաբաժին» (Նիկ., էջ  
275):
- 39 Նկատենք, որ սահմանման մէջ եւ վերնագրում  
նոյն նախադասութիւնը փոքր ինչ տարբեր կերպ  
է թարգմանուած. յունարէնում եւս տարբերու-  
թիւն կա՝ εἴπαισεν (Աֆթ. 63.8) - «տանջեաց» եւ  
ἐτόπτησεν - «զաւազանան էհար», եւ Դիոգենէ-  
սի խօսքերը վերնագրում բաց են թողնուած, ին-  
չի պատճառով էլ պէտքը կոչում է «գործա-  
կան»:
- 40 St'ru R. H. Hock, E. N. O'Neil, *The Chreia in  
Ancient Rhetoric*, vol. I. The Progymnasmata,  
Scholars Press, Atlanta, Georgia, 1986, p. 316:
- 41 A. Baumgartner, op. cit., էջ 465-466. Նիկողայո-  
սի անուամբ պահպանուած նախակրթութիւննե-  
րի հեղինակային պատկանելութիւնն անելի ուշ է  
հաստատուել (տե՛ս ծնթ. 8), եւ Բաումգարտները  
համարում էր, որ «Պիտոյից գրքի» հեղինակը եւ  
Նիկողայոսն օգտուել են մի ընդհանուր կորած  
աղբիւրից (էջ 461-462), իսկ Թէոնի նախակրթու-  
թիւնները նա Աֆթոնոսի հետ հաւասար դիտում  
էր որպէս «Պիտոյից գրքի» աղբիւր: Թէոնի հա-  
յերէն թարգմանութիւնը նրա ժամանակ դեռ  
յայտնաբերուած չէր:
- 42 Հմմտ. *Թէոփնէայ*, էջ 36-37. «Թէանով Պիթագո-  
րեան հարցեալ յունմանէ՝ քաօրեակի՞ն կին յառ-  
նէ մաքուր ի Թեամփորոնն իջանէ, ասաց՝ յիր-  
մէն եւ նոյն ժամայն. յօտարէն եւ երբէք ոչ»:
- 43 Յ. Տաշեան, *Մատենագրական մանր ուսումնա-  
սիրութիւնք, հետազօտութիւնք եւ բնագիրք*,  
Վիեննա, 1895, էջ 217-218:
- 44 *Պատմութիւն Սեբէոսի*, էջ 159. մատնանշած բո-  
լոր հատուածների հնարատր փոխարաբերու-  
թիւնների մասին տե՛ս Աբգարեանի դիտողու-  
թիւնները, նոյն տեղում, ծնթ. 583, 585, էջ 336,  
337, 338, տե՛ս նաեւ Ն. Ակիմեան, «Թէոփնէայ  
Յաղագս ճարտասանական կրթութեանց», *Հան-  
դէս ամսօրեայ*, 1934, էջ 207-208, Գ. Յովսէ-  
փեան, «Դաիթ Հարցացիւն եւ Պիտոյից գիրքը»,  
*Արարատ*, էջ 214-216:
- 45 *Թէոփնէայ Յաղագս ճարտասանական կրթու-  
թեանց*, էջ Լ.Զ:
- 46 Մովսէս Խորենացի, *Պատմութիւն հայոց*, քննա-  
կան բնագիր եւ ներածութիւն Մ. Արեղեանի եւ Ս.  
Յարութիւնեանի, լրացումները Ա. Սարգսեանի,  
Երեւան, 1991, էջ 29:



- 115 Բառացի նշանակում է «տաճար կողոպտող», հետևաբար եւ «սրբապաշտութիւն գործող»: Թէոֆի մօտ այն թարգմանուած է ե՛ր «տաճարակապուտ» (Թէոֆիլոս, էջ 108), ե՛ր «սեղանակապուտ» (էջ 112): «Տաճարի» փոխարէն «սեղանի»՝ քրիստոնէական եկեղեցու սրբութեան հանդէս գալը կարելի է մեկնաբանել որպէս «քրիստոնէացուած» թարգմանութիւն:
- 116 Փորձենք վերականգնել այն. \*δειται γαρ ταχυντάτου ρήτορος ή επί τοιούτω έπιχειρήματι τέχνη:
- 117 Փորձենք վերականգնել Աֆթոնիոսի նախնական տեքստը. \*προσωποποιία δέ, όταν άπαντα πλάττηται, και ήθος, και πρόσωπον, ώσπερ τίνας άν είποι λόγους ή θάλασσα θαλασσοκρατούντων (այս բայն աւանդուած է Հերոդոտոսի՝ 3.122 եւ Թուկիդիդէսի մօտ՝ 7.48) τών Λακεδαιμονίων՝ νύν πρόσωπον πλάττομεν λέγον (λέγειν), θάλασσα γάρ ού πέφυκε λέγειν, και ήθος αύτου άπορούν ότι έχουσιν αύτην οί ήπειρώται. ώσπερ 'Αριστειδης έποίησε, και Μένανδρος έν προσώπω θεών πλάττων τόν έλεγχον.
- 118 Ch. Walz, *Rhetores Graeci*, vol. I, pp. 219.3:
- 119 Այդ օրինակներն ամբողջացած են «Պիտոյից գրքի» մեր քննական հրատարակութեան ծանոթագրութիւններում, տե՛ս յատկապէս էջ 263, 269-271, 277-278, 282-283, 290-291, 295, 299-300, 304-305, 309-310, 315-316:
- 120 Օրինակ, «խրատի» սահմանման մէջ բերուող չորս օրինակներն Աֆթոնիոսի եւ Հերոդոտոսի մօտ աւելի ընդարձակ են, իսկ հայերէնում՝ բոլորն էլ համասուրուած: «Հնդհանուր տեղին» գրելու համար պահանջուող կէտերի թում Աֆթոնիոսն ու Հերոդոտոսն ունեն գնալով «մտադրութիւն» կէտը, որը զանց է առնուել հայերէն թարգմանուելու պահին, քանի որ վարժութիւններում էլ այդպիսի կէտ չկայ: Նոյնը կարող ենք աւել «ներքողեանի» սահմանումով պահանջուող չորս «ազգային պատկանելութիւն» (հաստատում է Հերոդոտոսը) եւ «բարաւանդութեան» համար պահանջվող սփոյն «ճշգրիտ» եւ անոթոս «ճոխ, զարդարուն» (հաստատում է Մատթէոս Կամարիոսի մօտ) կէտերի մասին:
- 121 Տե՛ս Յ. Մանանդեան, *Խորհրդացու անեղծուածի լուծումը*, Երեւան, 1934, էջ 169-170, որտեղ նա նշում է Մովսէս Բերթոյի աշակերտ Թէոֆոսի հետ, հմմտ. նաեւ Գ. Մուրադեան, «Պիտոյից գրքի ոչ թարգմանական մասերի լեզուն եւ հայ հեղինակների յունարանութիւնները», *Աշտանակ*, Գ, Երեւան, 2000, էջ 118-119: Վերջաբանի լեզուական տարբերութիւնը մնացած տեքստից նկատել է նաեւ Ստ. Մալխասեանը (Ստ. Մալխասեան, *Խորհրդացու անեղծուածի շուրջը*, Երեւան, 1940, էջ 67-73), իսկ Բառուզարուները խօսում էր միայն նրա խորագրի մասին՝ A. Baumgartner, op. cit., 465:

122 *Սրբոյ քերթողափոր մերոյ Մովսիսի Խորհրդացու Գիրք պիտոյից*, աշխատասիրութեամբ Յովհ. Զօհրապեան, Վենետիկ, 1796, էջ 446, ծան. հմմտ. (Pseudo)-Nonnos, *Die Scholien zu fünf Reden des Gregor von Nazianz*, herausgegeben von A. Manandian, Marburg, 1903, S. 48. «Յաղագս ճային եւ թեոցն հաւաքման. Ընտրութիւն էր սուէ յաղագս գեղեցկութեան հաւուց, եւ Ջեւս էր քննիչ ընտրութեանն: Արդ՝ աւր սահմանեցաւ, յորում պարտ էր գումարել հաւուցն առ Ջեւս: Եւ յառաջում սահմանեալ աւուրն եկին հաւքն ի գետս լուանայ, զի իրաքանչիւրոցն փայլեցէ բնական գեղեցկութիւնն: Իսկ ճայ անուանեալ հաւք քաջ մանաւանդ փորք է մարմնով եւ տգեղ տեսակաւ. այլ յանկեալ թեոց հաւուցն զհնքեամբ շուրջ բարդեալ՝ եկն եւ նա առ Ջեւս, որպէս զի սոցէ զգեղոյն յաղթութիւն: Եւ հողմոյ շնչեալ՝ ցրուէ զայլաւետս ի թեոցն, եւ մերկացեալ ի գեղեցկութեանն, ունելով զառ ի բնութեանն տգեղութիւն, լի եղել սմաւորով:»

123 A. Baumgartner, op. cit., S. 463. Ահա Լիբանիոսի առաջին. \*Εδοξε τῷ Διὶ βασιλεύεσθαι καὶ τὸ ὄρνιθων γένος καὶ διὰ τοῦ Ἑρμοῦ πρὸς ἀγῶνα κάλλους ἐκάλει ὡς δώσω τῷ καλλίστῳ φανέντι τὴν ὄρνιθων ἀρχήν. ἐκαλλωπίζετι γοῦν τὰ ὄρνεα τὰ μὲν ἐν κρήναις, τὰ δ' ἐν πηγαῖς τε καὶ λίμναις καὶ τῶν πτερῶν ἐξετίλλετο ὅποσα αὐτοῖς ὤραν οὐκ ἔφερον. ὁ δὲ κολοῖός, ἦν γὰρ ἄμορφος, ἐπιτεχνᾶται τοιάδε. τῶν πτερῶν ὅποσα ἐπέπλει τοῖς ὕδασι ἀναιρου: μένος ἕκαστον ἑαυτῷ περιτίθει συναρμόττων σοφῶς ἄλλο ἐπ' ἄλλῳ. καὶ χρῆμα ποικιλώτατον γίνεται. καὶ ὡς ἦκεν ἐπὶ τὴν κρίσιν, ἐπέστρεψε μὲν τῶν ὀρνέων τὰ δμματα, θάμβος δὲ ἐνέβαλε καὶ αὐτῷ τῷ δικαστῇ, ὥστε ὑπεχώρει μὲν αὐτῷ καὶ ὁ λευκότατος κύκνος, μικρὸν δὲ ὁ ταῶς ἐδόκει καὶ αἱ τούτου βαφαί, καταπεφρόνητο δὲ καὶ ἡ ἀετῶν σεμνότης. μέλλοντος δὲ ἦδε τοῦ Διὸς ἐγχειρίζειν αὐτῷ τὸ σκῆπτρον ἢ γλαυξ ἰδοῦσα τὸ ἑαυτῆς ἐν τῷ κολοῖῳ πτερόν προῖοῦσα ἀπέσπα καὶ ἄλλος τὸ ἑαυτοῦ καὶ πᾶς τὸ οἰκεῖον. ἀπελθόντων δὲ τῶν ἀλλοτρίων ἐγμνοῦντο τοῦ κολοῖου τὸ εἶδος καὶ ἐγελάτο. Τὸ μὴ τοῖς οἰκείοις κοσμεῖσθαι βραχεῖαν μὲν τὴν ἀπόλαυσιν, πολλὴν δὲ ἔλεγχε: θέντι ποιεῖ τὴν ἀσχύνην. (Libanii Progyrnasmata, I.3) - «Ջեւսը ցանկացաւ, որպէսզի թռչունների ցեղն էլ թագաւոր ունենայ, եւ Հերմեսի միջոցով կանչեց գեղեցկութեան մրցոյթի՝ խոստանալով ամենագեղեցիկ երեւացողին տալ թռչունների իշխանութիւնը: Այսպիսով թռչունները զարդարում էին՝ ով աղբիւրների, ով առուների, ով էլ լճակների մէջ, եւ դուրս էին քաղում այն փետուրները, որոնք չէին գեղեցկացնում նրանց: Իսկ ճայակը, քանի որ տգեղ էր, դիմում է հետեւեալ ճնարքին. հաւաքելով ջրերի երեսին լողացող փետուրները, իր վրայ է հագցնում դրանք՝ մնտորէն յարմարեցնելով մէկը միւսին: Եւ դաւ-

նում է խայտարեղ մի բան: Եւ երբ եկաւ դատաստանի, գրաւեց թռչունների հայացքները, զարմանք պատեց հե՛նց դատարարին էլ, այնպէս որ նրան զհշում էր նոյնիսկ ճերմակագոյն կարապը, նա մի պահ յիշեցնում էր սիրամարզին ու նրա գոյները, եւ արհամարհանքի արժանացաւ նոյնիսկ արծիւների վեմութիւնը: Երբ Ջեւսն արդէն մտադրում էր նրան յանձնել զաւագանը, բուն՝ տեսնելով ճայակի վրա իր փետուրը, մտեւնալով պոկեց այն, եւ մէկ ուրիշն՝ իրենը, եւ իրաքանչիւրը՝ սեփականը: Օտարների [փետուրները] հետացնելուց յետոյ մերկացրեցին ճայակի արտաքինը եւ ծաղրի ենթարկեցին: Ոչ սեփականներով զարդարուելը կարճատեւ վայելում է բերում եւ մեծ անօթ յանդիմանուածին»: Նոյն թեման արծարծում է նաեւ Աֆթոնիոսի առաջինի ժողովածոյի մէջ (Fabulae Aphthonii Rhetoris). Μῦθος ὁ τοῦ κολοῖου παραινῶν τὴν πλεονεξίαν ἀν μισεῖν· κάλλους ἦν ἀγῶν καὶ παρὰ τῷ Διὶ κριθησόμενοι πάντες οἱ ὄρνεις ἐφοῖτ' αὐτῶν Ἑρμοῦ τὴν κυρίαν ὀρίζοντος. ποταμούς τε καὶ λίμνας ἄπαντες κατελάμβανον τὰ μὲν φαῦλα τῶν πτερῶν ἀποβάλλοντες, τὰ δὲ κρείττω φαιδρύνοντες. κολοῖός δὲ οὐδὲν εὐπρεπὲς ἔχων ἀπὸ τῆς φύσεως, ἃ τῶν ἄλλων ἐξέπιπτε, ταῦτα οἰκεῖον συνέθηκε κόσμον. γλαυξ δὲ μόνη ἐπιγνοῦσα τὸ ἑαυτῆς ἀφηρείτο τὸν κολοῖον καὶ τὰ ἄλλα πράττειν οὕτως ἀνέπειθεν. ἀφαιρεθεῖς δὲ τὰ πτερά παρὰ πάντων ὁ κολοῖός γυμνός εἰς τὴν Διὸς ἀφίκετο κρίσιν. Κόσμος ἐπέισακτος ἀσχύνη τοῖς ἔχουσιν. «Առաջ ճայակի մասին, որ յորդորում էր, եւ Հերմեսի նշանակած օրը կային էին բոլոր թռչունները՝ Ջեւսի կողմից դատուելու: Գրաւել էին բոլոր գետերն ու լճերը, հետացնելով փետուրներից վատերը եւ մաքրելով աւելի լաւերը: Ծայակն էլ չունենալով ի բնէ ոչ մի արժանիք, ուրիշներից թափուած [փետուրներից] կազմեց իր զարդը: Միայն բուն՝ ճանաչելով սեփական [փետուրները], խլեց դրանք ճայակից եւ միւսներին էլ համոզեց այդպէս վարուել: Եւ բոլորի կողմից զրկուելով փետուրներից՝ ճայակը մերկ եկաւ Ջեւսի դատաստանին: Ուրիշի զարդն ընդունողի համար անօթ է» (Corpus fabularum Aesopicarum, vol.1.2, Leipzig, 1959):

116 Առաջը Միսթարայ Գոշի, Վենետիկ, 1854, էջ 173-174, տե՛ս Գիրք պիտոյից, էջ 318-319, ծանթ. 69. «Քարոզ ի հաստ հասանէր յիմուզի յօր գալ առ նա յերեսելի առ ի գեղեցկութեան ընտրութիւն, զի ամենայնի լիցի, որ յաղթն է հաւուց՝ թագաւոր: Եւ լի էին այնուհետեւ աղբերք եւ գետք հաւուց, ի մոսա զհնքեանս պնդելով, եւ զամվալելուցս թեոցն հանելով, եւ թողուին ամենաքեան որ միանգամ ի զարդ մատչէր: Այլ ճայ՝ արուեստի հմարէր, զի զայլոց հաւուց զթեւս զիրեալ բարդեալ եւ յարմարեալ, կարի յոյժ գեղեցիկ եւ զարմանալի երեւեր, եւ բազմատեսիլ էր իբրեւ

բուրաստան պայծառութեան թեօքն խրոխտացեալ. եւ զարմանալի էր ամենայն հաւուց. զարմանալի էր եւ դիցն, եւ ամենայն կամօք տեղի տուեալ յաղթութեան: Իսկ զիշերաբան իբրեւ այլով ամենայնի իմաստուն էր, եւ յայնժամ զթեւն ծանեաւ, եւ մատուցեալ ի բաց եհան, եւ ի ցոյց ամենայն հաւուց արար զգործն մինչեւ իրաքանչիւր ոք մատուցեալ զիրքն ի բաց հանէր, եւ մերկ ճայն երեւեցաւ խաղ ամենայն հաւուց»:

ՅԱԻԵԼՈՒԱԾ

«Պէտքերում» եւ «խրատներում» ասոյթների հեղինակների մասին տեղեկութիւններ («ա»՝ «ասողին գովութիւն» կէտը), իսկ «եղծումներում»՝ առասպելների սիւժէն («ա»՝ «իրացն արտադրութիւն» - «նիւթի շարադրանք» եւ «բ»՝ «բամբասանք ասողին» - «հեղինակի ամբաստանութիւն») պարունակող հասարակական բերում ենք մեր աշխարհաբար թարգմանութեամբ՝ զուգահեռաբար ներկայացնելով Աֆթոնիոսի համապատասխան հասարակական բերումները:

I. «Պէտքեր»

III.1 Դիօցենոս մեյրակիօն էօրակօս ատակտօն տօն փաժագօցօն էտփտրսեօն, էպէլփօն, տի ցար տօլօտօ փաժեւէս (Նիկ., էջ 272 «Դիօգենէսը, տեսնելով անկարգութիւն անող մանկանը, հարուածեց դաստիարակին, ստելով. ինչու՞ ես այդպէս դաստիարակում») - I.1. «Դիօգենէս տեսեալ զմանուկ ստամբակ, զմանկածուն գաւազանաւն էհար» (Պիտ. էջ 31):

Աֆթոնիոս. «Լաւ է գովել ողջ փիլիսոփայութիւնը, եւ յատկապէս այն, որով զբաղուել է Դիօգենէսը: Քանի որ մինչ միւսները սրուում են աստղերի ուղեծրերն ուսումնասիրելուն եւ արեւի շրջապտոյտը դիտելուն, նա գիտութիւնն ուղղել է բարբերի կատարելագործմանը»:

«Գիրք պիտոյից»՝ «Իսկապէս պէտք է սքանչանալ փիլիսոփաների գեղեցկագոյն կանառով, քանի որ նրանց միշտ յաղողուել է, կարծես օրինակ ծառայելով, իրենց յատուկ ազատամտութեամբ մի կողմ դնելով աշխարհի հոգսերը, զբաղուել Բանի փիլիսոփայական դիտարկումով եւ դրանով վեր լինել բոլոր մարդկանցից: Մակայն եւ նրանց թուում, պէտք է խոստովանել, բարձրագոյն գովութեան արժանի են կրօնիկները, որոնք տարբերում են [ուրիշներից] նրանով, որ ասոյթների հարցում լուռ լինելով՝ նախընտրում են բնութեան ուսումնասիրութիւնը, իսկ իրենք՝ լինելով վերին աստիճանի բախտաւոր, անդադար իրենց առաքելութիւնն են ցուցադրում կեանքի համար չափազանց պիտանի խրատներով, ինչպէս խօսքով, այն-

պէս էլ գործով: Այսպիսով, քանի որ նրանք օրենքները պահպաններն ու պաշտպաններն են եւ սեփական քաղաքի ամէն տեսակ բարգաւաճման նախադրեալը և այդ իսկ պատճառով, ուրիշներից այդքան բարձր են, ուստի արժանացել են նրանց մէջ գլխաւոր կոչուելու պատուին:

ա. Նոյնքան եւ իրենց մէջ ամենամեծի հռչակն է վայելում Դիոգենէսը, որ միշտ փայլում է իր խրատներով, որոնք գովելու եւ փառաբանելու համար բաւական չեն բոլոր խելացի մարդկանց կարողութիւնները»:

III.[2] Θεανώ ή Πυθαγορική φιλόσοφος έρωτη-  
 θεΐσα, πόσον έσται άπ' άνδρός γυνή προσεαθοΐσα  
 τοΐς θεομοφοροΐς, εΐ μέν εΐξ οικείου, παραχρηΐμα,  
 έφη, εΐ μέν άπ' άλλοτρίου, μηδέποτε (Նիկ., էջ  
 274 «Պիւթագորական փիլիսոփա Թէանոն, հար-  
 ցուած լինելով, Թէ գաղտնածէսի գնացող կինը որ-  
 քա՞ն ժամանակ պէտք է հեռու մնա տղամարդուց,  
 ասաց. սեփականից յետոյ՝ [թող գնա] անմիջապէս,  
 ուրիշից յետոյ՝ երբեք») - I.5. «ԶԹէանով ոմն պի-  
 թագորական եհարց, եթէ յետ քանի՞ աւուր կնոջ  
 առ այր մերձաւորութեան արժան է մտանել ի տէ-  
 բուհին: Եւ նա ասէ. «յիւրմէն նոյն օրին, յօտա-  
 բէն՝ եւ ոչ բնաւ երբէք»» (Պիտ. էջ 40):

ԱՖթոնիոս. «Փիլիսոփայութիւնն ամէն տեսա-  
 կի գովասանքի եւ հիացմունքի առարկայ է դարձ-  
 րել առաջին հերթին Պիւթագորասը, քանի որ չնա-  
 յած մարդիկ տարբերուած են ըստ սեռի եւ զբաղ-  
 ւում տարբեր գործերով՝ իրենց բնութեանը համա-  
 պատասխան, Պիւթագորասը, զբաղուելով փիլիսո-  
 փայութեամբ, առաքինութեան համար միաւորել է  
 սեռերը հետեւեալ կերպ: Նա համոզել է կանանց  
 պաշտել փիլիսոփայութիւնը, ինչպէս դա սովորա-  
 բար տղամարդիկ են անում, եւ շատերը սկսեցին  
 վայելել Պիւթագորասի իմաստութիւնը, եւ յատկա-  
 պէս Թէանոն: Ուրիշ ի՞նչ կարելի է պատմել նրա  
 մասին, քան այն օրէնքը, որ նա սահմանել է ող-  
 ջախոհութեան մասին: Գաղտնածէսի ժամանակ մի  
 կին ուղեւորուած էր սրբատեղի, սակայն վախենա-  
 լով, որ, մօտենալով, կարող է անարգել աստուած-  
 ներին, հարցրեց Թէանոյին...»:

«Գիրք պիտոյից» «ա. Իրաւացի է թւում, որ-  
 պէսզի բոլորը մշտապէս հիանան մեծ իմացութեան  
 տէր փիլիսոփայ Պիւթագորասով եւ գեղեցիկ ներ-  
 բողբանութիւն մատուցեն նրան: Նա այնպիսի  
 նախանձախնդրութիւն եւ ձգտում էր ցուցաբերում  
 ուսման հանդէպ, որ երկարատեւ ջանքեր գործա-  
 դրեց, որպէսզի հեռաւոր ճանապարհորդութիւն  
 ձեռնարկի Եգիպտոս, մի շատ վայելուչ ուղեւորու-  
 թիւն իմաստութիւն ձեռք բերելու նպատակով: Եւ  
 այնտեղ իւրացնելով բոլոր մտաւոր արուեստները,  
 անդադար պարապում էր եւ գիտելիքների մէջ

հմտութեամբ գերազանցեց բոլոր մարդկանց: Իսկ  
 ընկալելով դրանք, կարողացաւ համառ աշխատան-  
 քով թարգմանել դրանք յոյների լեզուով: Եւ աւե-  
 լի առաջադիմելով, ձեռնամուխ եղաւ ուսուցանե-  
 լու գործին, կեանքի համար օգտակար խրատներ  
 արտասանելով բոլորի առջեւ. ոչ միայն բնու-  
 թեամբ առնական տղամարդկանց, այլեւ կանանց  
 թոյլ ու անզօր ցեղին մատուցեց նոյն հրահանգ-  
 ները: Եւ, բարձրացնելով իմաստութեան եւ խոհե-  
 մութեան բարձունքին, ըստ արժանւոյն օրէնսդիր  
 էր կարգում նրանց բոլոր մարդկանց վրայ: Այդ-  
 պէս էլ հետեւեալ դատողութիւնն առանց դոյզն  
 ինչ երկբայութեան ներկայացնում է նրա ողջա-  
 մտութիւնը:

բ. Քանզի Թէանո անունով մի կին, որ եղել  
 էր նրա մեծագոյն իմաստութիւնների ունկնդիրը,  
 երբ նրան մէկը հարցրեց...»:

III.[3] Λάκων έρωτηθεις, τίνες άν εΐεν τής  
 Σπάρτης οι όροι, τօ δօρυ έδειξεν (Նիկ., էջ 277  
 «Լակոնացին, հարցուած լինելով, Թէ որտեղ են  
 Սպարտայի սահմանները, ցոյց տուեց նիզակը») -  
 I.4. «զԼակոնացի ոմն հարցեալ, Թէ ո՞ւր սահ-  
 մանք Սպարտաց. եւ նորա գնիզակն ցուցեալ ա-  
 սէ. «Յայսմ վայրի»» (Պիտ. էջ 38):

ԱՖթոնիոս. «Լակոնացիների քաջութիւնն ի-  
 րենց գործերի մէջ է, քանի որ, Հերակլեսի հետ-  
 նորդները լինելով, նրանք իրենց արարքներով  
 բացայայտում են նախահօրը: Բոլորը սովորաբար  
 հիացել են լակեդեմոնացիներով, յատկապէս քա-  
 յաքի մասին նրանց արած դատողութեան հա-  
 մար: Չէ՞ որ մէկը, կարծելով որ Լակեդեմոնն ի-  
 րեն շրջապատում է այնքան հողերով, որքան  
 յաղթանակի առթիւ յուշարձաններ է կանգնեցրել,  
 մօտեցաւ եւ հարցրեց...»:

«Գիրք պիտոյից» «Քաջութեան մեծագոյն  
 դրսեւորումները գովելիս, մանաւանդ՝ ճանաչողա-  
 կան եւ նախանձից զուրկ նկատառումներով, ինչ-  
 պէս ինձ, այնպէս էլ բոլորին միայն լակեդեմոնա-  
 ցիների ցեղն է թւում արեւի տակ ողջ մարդկային  
 ազգն արիութեամբ գերազանցող: Նրանք իրենց  
 սահմաններից բոլորովին վտարել էին թուլամորթ  
 երկչոտութիւնը, եւ միշտ զարգացրել միաժամա-  
 նակ իրենց քաջութիւնն ու իմաստութիւնը, ինչի  
 համար իսկապէս ըստ արժանւոյն փառաւորուեցին  
 ու հռչակաւոր դարձան երկնքի տակ, այնքան որ  
 սկսեց համարուել, որ իրենք իրենց քաջութեամբ ի  
 զօրու են արժանաւոր կերպով ամրացնել քաղաք-  
 ները՝ պարիսպներ կամ ուրիշ վարպետօրէն պատ-  
 րաստուած ամրութիւններ կառուցելու փոխարէն.  
 եւ նկատի ունեմ նրանց հսկայական ու հոյակապ  
 սպառազինութիւնը, եւ Թէ ինչպիսի հերոսութիւն  
 ցուցաբերեցին նրանք՝ դիմակայելով բոլոր թշնա-

միներին, նրանց վախեցնելով եւ պարտութեան  
 մատնելով: Իսկ նրանց, որոնց նրանք հնազանդեց-  
 նելով ծառայեցնում էին իրենց, կամ էլ նրանց, ո-  
 ռոնք ինքնակամ էին դաշնակցում, հրամայում  
 էին, հաստատելով դա որպէս բնական օրէնք, ոչն-  
 չացնել պարիսպներն ու պատուարները եւ ամրա-  
 նալ իրենց յաղթական քաջութեամբ՝ բարեքնեքի  
 մէջ վայելելով ապահով ու վստահելի խաղաղու-  
 թիւն. ինչպէս որ հետեւեալ խօսքերը բացայայտե-  
 լու են նրանց անհամեմատելի արիութիւնը:

բ. Մէկը, տեսնելով նրանց ընդարձակ եւ ան-  
 ծայրածիր տիրոյթները, զարմանալով մօտեցաւ եւ  
 հարցրեց...»:

Յունարէն պահանուած նախօրինակ  
 չունեցող «պէտքեր»

I.2. «Աղէքսանդրոս Մակեդոնացի հարցեալ  
 յուսմանէ. «Ո՞ւր են քո գանձք», զտիրելիս ցուցեալ  
 ասաց. «Ի սոսա»» (Պիտ. էջ 33):

«Գիրք պիտոյից» «Իւրաքանչիւր ոք, բայց  
 յատկապէս իմաստնագոյն մարդիկ միշտ գովասան-  
 քի արժանի են համարում հօրութեամբ եւ ահե-  
 դութեամբ աչքի ընկնող Ալեքսանդրի թագաւորու-  
 թիւնը, որը, ստանալով հօր փոքր տէրութիւնը, ա-  
 րագ առաջ գնալով, հասաւ բարձրագոյն թագաւոր-  
 ութեան գահին, որով աստուածաբար տիրացաւ  
 արեւի տակ գտնուող բոլոր ծովային ու ցամաքա-  
 յին տարածքներին, եւ դրանք հնազանդեցրել էր  
 ոչ միայն քաջութեամբ, այլեւ իմաստութեամբ, ո-  
 ռովհետեւ բաւական երկար ժամանակ սովորել էր  
 ամենահմուտ եւ փորձառու Արիստոտելի հրա-  
 հանգներով, ինչի շնորհիւ էլ բոլորի առջեւ իրեն  
 մեծ ու հիացմունքի արժանի էր ցոյց տալիս:

բ. Այնքան, որ մէկը, տեսնելով նրա մեծ  
 հարստութիւնն ու փառաւոր թագաւորութիւնը,  
 մտադրուեց ծանօթանալ նրա կուտակած անհամար  
 գանձերի շտեմարանին եւ այդ պատճառով հարց-  
 րեց...»:

I.3. «Զի զՍոկրատէս ոմն եհարց իմաստնաւոր,  
 Թէ «զմէ՞ ի քաջ մտառուացն, եւ ի վատառուսն  
 զնոյն պահանջես համարս», եւ նա ասէ, Թէ. «Ի նո-  
 ցանէ՝ վասն փութոյն, իսկ ի վատառուաց ի միտ՝  
 վասն ջանոյն»» (Պիտ. էջ 35):

«Գիրք պիտոյից» «Եթէ որեւէ մէկը ցանկա-  
 նայ կրթուել ամենաիմաստուն հրահանգներով եւ  
 դիտարկի բոլոր այդ գործում հմուտ մարդկանց  
 խմբերը՝ որոշելու համար իւրաքանչիւրի՝ օգտաւե-  
 րութեան աստիճանը, ինձ թւում է, նա կը յայտ-  
 նաբերի, որ իմաստակների բազմութիւնն է, որ մե-  
 ծապէս գերազանցում է բոլորին: Քանի որ յատկա-  
 պէս նրանք են սովորեցրել այդ բաները՝ հնարաւո-  
 րութիւն տալով քաղաքներին վայելել մեծագոյն  
 բարեքներ, իւրաքանչիւրին սեփական երկրում.

ինչպէս նաեւ ընդհանրապէս բոլոր մարդկանց. Սա-  
 կայն պէտք է ընդունել, որ նրանց թւում էլ իր գի-  
 տելիքներով մեծագոյն հռչակ է վայելում Սոկրա-  
 տէսը, որը չնայած աղքատ տնից էր եւ աներեւելի  
 ծնողներից, եւ մանաւանդ միայն հասուն տարի-  
 քում ձեռնամուխ եղաւ մտաւոր զբաղմունքներին,  
 սակայն իսկապէս գերազանցելով բոլորին իր չա-  
 փազանց խելացի մտաւոր կարողութիւններով եւ  
 անդու աշխատասիրութեամբ՝ հասաւ ուսուցչապե-  
 տութեան գերագոյն աստիճանին: Մինչդեռ ուրիշ-  
 ները, մեծ միջոցներ ծախելով ու շատ ջանքեր  
 գործադրելով, ոչ մի կերպ չկարողացան հասնել  
 նոյն բարձունքին: Քանզի նա բոլորի հիացմունքը  
 շարժող այնպիսի հմտութիւն էր ցուցաբերում ա-  
 րուեստների մէջ, որ բոլոր վարժապետներին օրի-  
 նակ ծառայող առաջին տեղը շնորհուեց նրան»:

«Խրատներ»

IV.[1] Χρή πενίην φεύγοντα, και ές μεγα-  
 κήτεα πόντον

Րίπτειν, και πετρών, Κύρνε, κατ' ήλιβάτων  
 (ԱՖթ., էջ 68 «Պէտք է, աղքատութիւնից փախչե-  
 լով, նետուել մեծ կէտերով լի ծովը, Կիւրնոս, եւ  
 բարձր ժայռերից») - II.3. Արժան է յաղթատութե-  
 նէ փախչել, եւ ի մեծն անկանել ծով, եւ կամ ի  
 վիմաց հօսիլ ի բարձանց» (Պիտ. էջ 49):

ԱՖթոնիոս. «Թէոգնիսը թոյլ չտուեց պոե-  
 տիան մեղադրանքի առարկայ դարձնել, առասպել-  
 ներից նախընտրելով խրատները: Քանզի, տեսնե-  
 լով, որ բանաստեղծները շատ բարձր են դասում  
 առասպելներ պատմելը, ինքը հրաժարուեց առա-  
 պելներից՝ բանաստեղծական չափի մէջ ղենելով  
 խրատներ. Թէ ինչպէս պէտք է ապրել՝ հոգալով  
 տաղաչափութեան մասին, եւ համադրելով դրա  
 հետ խրատաբանութեան օգուտը: Իհարկէ, շատ  
 բաների համար կարելի էր գովել Թէոգնիսին, եւ  
 յատկապէս աղքատութեան մասին նրա իմաստուն  
 խօսքերի համար»:

«Գիրք պիտոյից». «Իսկապէս պէտք է հիա-  
 նալ իմաստակների՝ ամէն ինչում յարգարժան ու  
 փառաւոր յոյով եւ ներբողական խօսքեր ձօնել  
 նրանց: Քանի որ, աշխարհում բազում մարդկանց  
 դաստիարակելով շատ իմաստուն ու արժանավայել  
 խրատներով, ոչ միայն պատճառ եղան քաղաքնե-  
 րի բարեկարգութեան ու խաղաղ կեանքի, այլեւ  
 ինպատեցին իրաւաբար ատենաների վայելուչ տես-  
 քի պայծառացմանը:

ա. Նրանց մէջ այժմ միայն Բիաս իմաստակն  
 է համարում բոլորին իր իմաստնագոյն ասոյթնե-  
 րով գերազանցող: Հասնելով երկու սքանչելի բա-  
 նական արուեստների՝ ճարտասանութեան եւ միա-  
 ժամանակ բանաստեղծական արուեստի մէջ կատա-  
 րելութեան, չնայած դրանք բաւական բաժանուած

են միմեանցից, նա այնքան հզորացաւ դրանց մէջ իր ճոխ վաստակով, որ, արտայայտելով մի արուեստը գլուխները բաժանումով ու ճարտար խօսքով, իսկ միւսը՝ ներդաշնակ ու հաւասարակչի տաղաչափութեամբ, բոլորին ներկայացրեց իրենց վայել խրատաբանութիւնը»:

IV.1. Σοφὸν ἔν βούλευμα ὑπέρ χεῖρας πολλὰς (Նիկ., էջ 278 «Մէկ իմաստուն որոշումը բազմաթիւ ձեռքերի է գերազանցում») - II.6. «Իմաստուն խորհրդով՝ բազմաձեռն զորութեան յաղթէ, իսկ անուսումնութիւն անհնարին չար է» (Պիտ. էջ 55):

**Աֆթունիոս.** «Եւրիպիդէսը բնմի վրայ հնում կատարուած դժբախտութիւններ երգող էր՝ ոչ թէ յանդիմանելով ճակատագիրն աղետների համար, այլ պարզապէս հանդիսատեսներին ստիպելով զգուշանալ: Չէ՞ որ, աղետախնդրին ողբալով, թոյլ չէր տալիս, որպէսզի միւսներն աղետներ կրեն: Եւրիպիդէսին կարելի էր շատ բաների համար գովել, սակայն յատկապէս այն խորիմաստ խօսքերի, որ նա ասել է իմաստութեան մասին: Քանի որ, տեսնելով, որ շատերն իմաստութիւնից վեր նախապատուութիւն են տալիս ուժին, ասոյթ է արտասանում նրա մասին՝ միմեանց հակադրելով նրանց բնութիւնները»:

**«Գիրք պիտոյից».** «Բանաստեղծները, որոնք յատկապէս զբաղուել են իմաստութեամբ, արժանի են մեծ գովասանքի, ինչն ամէնից շատ ակնյայտ է այն բանից, որ, խուսափելով դատարկ ու երկարաշունչ խօսքերից, կամ անօգուտ կենցաղային զրոյցներից, նրանք մեծապէս հոգում էին միայն, որպէսզի, համառօտ ու վայելուչ խօսքերով արտայայտելով իրենց մտքերը, ներկայացնեն դրանք ունկնդիրներին որպէս հիացմունքի արժանի եւ իսկապէս օգտակար: Այդպիսին պէտք է համարել յատկապէս ողբերգականների հրաշալի դասը: Որովհետեւ նրանք, յամբական չափով երգելով հների պատմութիւնները, նրանց քաջութեանը հաւասար այնպիսի իմաստութիւն էին ցուցաբերում, որ միահիւսելով քաղցր մեղեդիներին մի շարք վայելուչ ու դիպուկ խրատներ, դրանով մխիթարում էին բոլոր վշտացած սպառնների հոգիները»:

ա. Եւ սրանցից ողբերգակ Եւրիպիդեսն է արժանի մեծագոյն գովասանքի, որ, ուրախացնելով խելացի մարդկանց հոգիներն ազդեցիկ ու վարպետօրէն յորինուած հերոսական ողբերգութիւններով, դրանց մէջ անջնջելի յիշատակի արժանացրեց եւ անմահացրեց յիշարժան խրատների արուեստը»:

IV.2. Δεί δὴ χρημάτων καὶ ἀνευ τούτων οὐ δέν ἐστί γενέσθαι τῶν δεόντων (Նիկ., էջ 279 «Պէտք են միջոցներ, եւ առանց նրանց չի կարող լինել անհրաժեշտ բաներից ոչինչ») - II.1. «Պէտք են ընչից, եւ առանց սոցա ոչ է հնար ինչ լինել յարժանեացն» (Պիտ. էջ 44):

**Աֆթունիոս.** «Հոնտորների՝ մեծ երեւացող արուեստն ինչ-որ աւելի մեծ բան ձեռք բերեց Դեմոսթենէսի զօրեղ խօսքի շնորհիւ: Քանզի ինչպէս այդ արուեստը զարգացնում է միւս արուեստները, այնպէս էլ ճարտասանը նրա շնորհիւ բացայայտել է միւս ճարտասաններին: Իսկ շատերից հիացմունքի արժանի է Դեմոսթենէսը, յատկապէս այն խօսքերի համար, որ ասում է միջոցների մասին: Քանի որ տեսնելով, որ շատերն այլ կերպ են դատում անհրաժեշտ բաների մասին, մի խօսք է արտասանում դրանց մասին, ե՛ւ ճշմարտութիւնը ցոյց տալով, ե՛ւ հաստատելով մարդկային բնաւորութիւնը»:

**«Գիրք պիտոյից».** «Պէտք է խոստովանել, որ ամենացինների քաղաքը հրաշալի է եւ հուշակաւոր բազմապիսի ճարտասանների երանելի պարիով, որոնք, գերազանցելով մէկը միւսին կեանքի համար յոյժ օգտակար արարքներով, բարիքների պատճառ ու երաշխաւոր են հանդիսանում: Սակայն բոլորին իր արուեստով գերազանցում է միայն Դեմոսթենէսը, որ հասել է կատարելութեան բարձունքին: Մանաւանդ եթէ որեւէ մէկը ցանկանայ արդար՝ զուգարդումով համեմատուել նրա հետ քաղաքական գործերում, համակողմանի քննութիւնը ցոյց կտայ, որ քաղաքագէտների դասի մէջ ոչ մէկը համեմատելի չէ նրա հետ: Նա, որ իր մէջ կրում էր ազնուական բարքի տարրեր, յատկապէս մեծ առաքինութիւններ ու կայտառութիւն, իր բարեծանոց խրատի շնորհիւ պատճառ դարձաւ քաղաքների շէնութեան ու խաղաղութեան, նաեւ չար թշնամիների աւազակային յարձակմանը դիմակայելու համար զանազան ամուր զէնքեր, քաջարի զօրքեր ու ամրութիւններ պատրաստեց, որոնց օգնութեամբ հարազատ քաղաքն անառիկ, անխոռով ու հաստատուն խաղաղութեան մէջ էր պահում»:

IV.3. "Αφρων δ' ὀ κ' ἐθέλει πρὸς κρείσσονα ἀντιφερ(ζ)εῖν (Նիկ., էջ 281) - I.2. «Թիմար է, որ ընդ վիհս քան զինքն հակառակէ» (Պիտ. էջ 47):

**Աֆթունիոս.** «Հեսիոդոսը, որ իմաստուն դատողութիւններ էր անում, ճշմարիտ արտայայտուել է Մուսաների մասին, քանի որ ասոյթներ է արտասանել աստուածների մասին ու կազմել աստուածների ծննդաբանութիւնը, եւ ծածուկ չի թողել, թէ ով ումից է սերում: Եւ շատ բաների համար պէտք է գովել Հեսիոդոսին, յատկապէս որ պատմել է հողագործների կեանքի մասին»:

**«Գիրք պիտոյից».** «Բանաստեղծների վայելչական դասի մէջ հուշակաւոր ու բարձրագոյն պատուի արժանացած Հեսիոդոսին պէտք է միշտ արժանացնել մեծագոյն ու փառաւոր գովասանքի: Նա առաջ գնալով իր ցանկալի ու յղկուած արուեստով, իր բանաստեղծութիւններով այնքան գերազանցեց բոլորին, որ իր հերոսական պոեմներով ապացուցեց, թէ ինքը բարձր է բոլոր բանաստեղծների մէջ»:

րով ապացուցեց, թէ ինքը բարձր է բոլոր բանաստեղծների մէջ ամենաբարձր ու հուշակաւոր Հոմերոսից: Եւ յատկապէս նրանով, որ քննելով, բոլորին ցոյց տուեց երկնքի ու երկրի բնութիւնը, ինչպէս նաեւ բոլոր տարրերի ներդաշնակ միաւորումը միմեանց հետ: Դրա հետ մէկտեղ տեղեկութիւններ է հաղորդել երկրագործութեան եւ կեանքի համար օգտակար շատ ուրիշ զբաղմունքների հետ կապուած հանգամանքների մասին»:

**Յունարեւմ պահագնում ԱպսոթիԱսկ շուճեցող «խրատներ»**

II.4. «Որ աստուծոյ հաւանի, առաւել նա լուհից է նմա» (Պիտ. էջ 51):

«Ո՞ր բանական արուեստն է, որ կարող է զարդարել ամէն ինչ գեղեցիկ ներդաշնակութեամբ ու քաղցրացնել ականջները փայլուն խօսքերով: Ինձ թւում է, որ պէտք է մասնացոյց անել որեւէ ուրիշ զբաղմունք, քան երանելի բանաստեղծական արուեստն է՝ շատ օգտակար ու պիտանի: Որովհետեւ բոլորն ինչպէս մշտահոս աղբիւրից, սրանից իմաստութիւն քաղելով, համարձակ յագեցնում են իւրաքանչիւրն իր գիտութեան ծարաւը»:

ա. Չնայած եւ ուրիշներն են եղել այդ սքանչելի արուեստի յայտնագործողները, սակայն հուշակաւոր ու մեծ Հոմերոսը՝ զարգացնելով իր հմտութիւնը եւ հասցնելով այն ամենամեծ բարձունքին, կարողացաւ այնպէս բոլորին գերազանցել, որ նրանից յետոյ եկողները չկարողացան անգամ արժանի լինել նրա պոեմներն ունկնդրելուն, էլ չեն խօսում նրան հաւասար գտնուելու մասին: Որոնց կողմից էլ նա ճանաչուեց բոլոր բանաստեղծների հայր»:

II.5. «Ոչ ամենեցուն զնոյն տուեալ է, եւ ոչ օգուտ բերէ» (Պիտ. էջ 53):

«Եթէ որեւէ մէկին վիճակուի տեսնել մարդկային ցեղին բազում շահ ու օգուտ բերող կատակերգականների դասը, թող իմանայ, որ նրանք մշտապէս պատճառ են հանդիսացել հիացմունքի արժանի բաների, որ յորինել են հաճելի ու քաղցրալուր խօսքերին խառնուած զանազան օգտաւետ եւ ուսանելի խրատներ, մի կողմից՝ յորդորելով ճանասանելի բարին, միւս կողմից՝ ստիպելով հրաժարուել չել բարին, նաեւ զուարճացնելով ու հաճոյք պատճառելով: Այդպիսով երկու կողմից յղկելով՝ դաստիարակեցին բազմաթիւ ունկնդիրների միտքը»:

ա. Նրանցից մէկը, յաջողակ սկսելով, հասաւ վարպետութեան ամենաբարձր աստիճանին. խօսքս կատակերգականների գլխաւորի՝ Մենանդրոսի մասին է: Չնայած նրան բաժին էր ընկել բոլորից յետոյ էլ: Չնայած նրան բաժին էր ընկել բոլորից յետոյ էլ չհամաձայնելու դէպքում, ինքը կենթարկուի նոյն [պատժին]: Քանի որ Գիգեսը նախընտրեց ողջ կայն նա այնքան լեցուն էր իմաստութեամբ, որ ոչ

ոք չէր կարողանայ համեմատել նրա հետ իր մեծ թէ փոքր հզորութիւնը»:

II.7. «Կրթութիւն է ամենայն ինչ» (Պիտ. էջ 57):

«Մտաբերեց յոյժ խելացի փիլիսոփաների յոյլը, միշտ տեղին է արժանացնել նրանց ամենաբարձր գովասանքի: Նրանք, վայելուչ կերպով արհամարհելով մարմնական հաճոյքները, զբաղուել են միայն Բանի մաքուր հայեցողութեամբ, եւ դրանով բարի համբաւի արժանացան այս աշխարհում: Նրանցից եօթն, առաջ անցնելով բոլորից, իրենց աւելի իմաստուն ցոյց տուեցին ու աւելի փառաւոր նրանով, որ, մէկը միւսից աւելի հզոր խրատներ արտասանելով, կարողացան ստուերում թողնել գրեթէ բոլորի գիտելիքներն ու արժանանալ բազմաթիւ ունկնդիրների հիացմունքին: Այսպիսով, նրանք այնքան գերազանցեցին [միւսներին] գիտելիքներով եւ իմաստութեամբ, որքան որ նրանք զանազանուած են մնացած մարդկանցից»:

ա. Նրանց միջից էլ իր հերթին առանձնանում է հանճարեղ իմաստութեամբ լեցուն Պերիանդրոս Կորնթացին»:

**«Եղծումներ»**

V.3. Περὶ ἀνασκευῆς τῶν κατὰ Κανδαύλην· Ἀνασκευῆ, ὅτι οὐκ εἰκότα τὰ κατὰ Κανδαύλην («Կանդաւլեսի [պատմութեան] եղծման մասին. եղծում, որ Կանդաւլեսին վերաբերող [պատմութիւնն] անհաւանական է», Նիկ. էջ 287) - III.2. «Եղծ գԿանտուղեայ» (էջ 63):

**Աֆթունիոս.** «Նախկինում ես շատ բարձր էի գնահատում պատմիչներին ու բանաստեղծներին, իսկ այժմ ինձ թւում է, որ Հերոդոտոսը ոչ մի բանով չի տարբերուել բանաստեղծներից: Չէ՞ որ արձակ գրելիս պէտք է հետեւել ճշմարտութեանը, իսկ բանաստեղծութիւն գրելիս՝ առասպելներին: Իսկ նա՝ խառնելով երկու արուեստների սահմանները, ոչ տաղաչափութեան գեղեցկութիւնն է պահպանում, ոչ էլ հոգ է տանում պատմութեան ճշմարտացիութեան մասին: Եւ նրան կարելի էր մեղադրել շատ բաների, բայց յատկապէս այն հեքիաթների համար, որ նա պատմել է Կանդաւլեսի մասին: Կանդաւլեսն, ասում է նա, սերում է Հերակլեսից: Սիրահարուելով իր կնոջը՝ նա ականատես դարձրեց Գիգեսին. նրան տուն հրաւիրելով, կանգնեցրեց դռան ետեւում՝ թոյլ տալով դիտել այնտեղից իր կողակցին: Իսկ նա [կինը] իմանալով դիտելու մասին, զայրացաւ, եւ, սպասելով մինչեւ վրայ հասնի առաւօտը, իր մօտ կանչեց Գիգեսին եւ ընտրութեան երկու տարբերակ առաջարկեց նրան՝ կամ սպանել Կանդաւլեսին, կամ էլ, չհամաձայնելու դէպքում, ինքը կենթարկուի նոյն [պատժին]: Քանի որ Գիգեսը նախընտրեց ողջ

մնալ, Կանդակեսը սպանուեց, եւ որպէս սպանութեան վարձ նրան տրուեց ամուսնութիւնն այդ կնոջ հետ»:

«Գիրք պիտոյից» «Բանաստեղծներն արժանի են ոչ այնքան մեծ յանդիմանութեան ու պարսաւանքի, քանի որ նրանց մշտական զբաղմունքն առասպելական յորինուածքներն են:

ա. Բայց եթէ ճշմարտութիւնից շեղուած է որեւէ ճշմարիտ մտածող, ինչպէս օրինակ, Հերոդոտոսը, նա պէտք է առանց որեւէ երկբայութեան ենթարկուի ամենախիստ պարսաւանքի: Չէ՞ որ, իրեն արձակագիր ձեւացնելով, իբրեւ թէ Հաւաստի բաներ պատմելով, եւ զրոյցներ հաղորդելով, նա գերազանցել է բանաստեղծների սուտ պատմութիւնները:

բ. Սակայն դիտարկենք դրանցից մէկը, որում նա պատմում է, թէ ինչպէս Կանտուղեսը լիդացիների թագաւոր էր: Ասում է, որ նա չափից աւելի մեծ կիրք էր տածում իր կնոջ հանդէպ, այնքան, որ կարծում էր, թէ նա գեղեցկութեամբ գերազանցում է բոլոր կանանց, եւ փափագում էր, որպէսզի ուրիշներն էլ տեսնեն նրան առանց Հագուստի: Եւ այսպիսով, առանց նրա գիտութեան եւ անսպասելի, նրան մերկ ցոյց տուեց իր թիկնապազ Գիգեսին: Պատմում է, որ յետոյ կինն, իմանալով կատարուած խայտառակութեան մասին, տեսակցելով իրեն տեսնողի Հետ, Հրամայեց նրան, որ եթէ չսպանի իր ամուսին Կանտուղեսին, ինքը կը մեռնի սրից: Եւ պատմում է, որ նա, Համաձայնելով թագուհու Հետ, նենգաբար սպանեց թագաւորին եւ կնոջը կնութեան վերցրեց, եւ ժառանգեց լիդացիների թագաւորութիւնը»:

VI.8 'Ανασκευή ὄτι οὐκ εἰκότα τὰ κατὰ Νόβην (Նիկ. էջ 310) - III.1. «Եղծ գնէովբայ» (Պիտ. էջ 60):

ԱՅԹՅՈՒՆԻՅԱՆ «Քանի դեռ մնացած աստուածներն էին ամբաստանուած, ինձ թուում էր, թէ Հնարաւոր է յանդուրժել միւս աստուածների ամբաստանութիւնը: Բայց երբ կամաց-կամաց առաջանալով Հասան վերջապէս Ջեւսին, ինչպէ՞ս կարելի էր յանդուրժել, որ աստուածներից լաւագոյնը միւսների Հետ միասին դարձել է անարգման առարկայ: Ահա թէ ինչ առասպել են պատմում նրա շառաւղի մասին: Ջեւսն, ասում են, լոյս աշխարհ բերեց Տանտալոսին, իսկ սա՞ Նիոբէին, եւ նա, աստուածներից լաւագոյնի շառաւիղը լինելով, Լետոյ աստուածուհու մերձաւորը դարձաւ: Եւ Հաղորդուելով, պարծենում էր աստուածուհու մօտ, իսկ պարծենալը պայմանաւորուած էր զաւակների մեծ թուով: Քանի որ կարծում էր, որ ծնելով շատերին, Լետոյից լաւ մայր էր: Նաեւ նրա կարծիքով աստուածուհին զիջում էր իրեն նրանով, որ [իր երկու զաւակներին] միանգամից է ծնել: Եւ յաճախ

էր նրան վրդովում: Իսկ աստուածուհին, զայրանալով այդ ամէնից, զինեց սակաւաթիւներին շատերի դէմ, եւ Արտեմիսի ձեռքով սպանուեցին աղջիկները, իսկ Ապոլլոնի ձեռքով՝ մնացածները: Եւ ողբալով իր վիրտը, մայրն իր բնութիւնը փոխեց քարի, բայց, բնութիւնը փոխելով, չի փոխում ճակատագիրը՝ կանգնած է որպէս արտասուող քարէ արձան»:

«Գիրք պիտոյից» «Կարելի է տեսնել, որ ստից աշխարհ եկած ու տարածուած չարիքները որեւէ այլ տեղից չեն, այլ առաւելապէս բանաստեղծների պատմածից: Քանի որ, միշտ հետեւելով բարբառանքներին ու առասպելներին որպէս ինչ-որ հրաշալի ու յարգարժան բաների, եւ նոյնիսկ յորինելով դրանք, միշտ անհատ կամք ցուցաբերելով, սրուել են այդ մոլորական զբաղմունքին: Եւ չնայած ոմանք մի փոքր ճշմարտութիւն են խառնում դրան, պէտք է զարմանալ՝ դա արուում է շատ սուտը չնչին ճշմարտութեամբ ծածկելու համար՝ պարզամիտներին խաբելու ու կորստեան մատնելու նպատակով:

բ. Եւ մանաւանդ Նիոբէի մասին պատմող անհաւատալի զրոյցը, որն ասում է, թէ նա Տանտալոսի կինն էր եւ շատ սիրելի էր Լետոյ աստուածուհուն՝ Ապոլլոնի մօրը: Եւ ըստ առասպելի, նա Հարուստ էր Հաւասար չափով զաւակներով՝ վեց արական սեռի եւ նոյնքան իգական, եւ պարծենալով իր բազմազաւակութեամբ, անարգում էր Լետոյին: Աստուածուհին, շատ բարկանալով դրանից, ուղարկեց իր զաւակներ Ապոլլոնին ու Արտեմիսին եւ բնաջնջեց Ապոլլոնի օգնութեամբ տղաներին, իսկ Արտեմիսի օգնութեամբ՝ աղջիկներին: Քանի որ, ըստ առասպելի, ճաշկերոյթ էին կազմակերպել՝ անակնկալ մահ բերելու նպատակով: Եւ Նիոբէն յանկարծակի ու դժնդակ վշտից անզգայանալով, քարացաւ ու գրեթէ մինչեւ օրս էլ արտասուում է»:

Յունարէն Աստիօրիանայ չունեցող «եղծումներ»

III.3. «Եղծ գերակեայ» (Պիտ. էջ 65):

«ա. Բանաստեղծների բոլոր պատմութիւններն իսկապէս կարելի է պարսաւել կորստեան պատճառ լինելու համար. չէ որ նրանք, իրենց առասպելական զրոյցներով խաբելով, մոլորութեան մէջ են գցում պարզամիտներին եւ մղում նրանց ամբարշտութեան ուղով:

բ. Սակայն յատկապէս Հերակլեսի մասին պատմածը, թէ ինչպէս նա մեծ տօնի ժամանակ բազմամարդ մի գիշեր անօրէն պղծութիւն գործեց, գերազանցում է բոլոր սուտ պատմութիւնները: Քանի որ այն ոչ միայն շեղում է արդար ճանապարհից, այլեւ, բազմապիսի չարութեամբ կախարդելով իր ունկնդիրներին, նրանց կորստեան պատ-

ճառն է դառնում: Իսկ պատմում է Հետեւեալը. Արկադիայի քաղաքներից մէկում Աթենասի տօնակատարութիւնն էր, եւ նրա քրմուհուն՝ Ալէոսի դուստր ոմն Աւգէին, որը մասնակցում էր գիշերային ծիսակատարութեան ժամանակ կատարուող պարին, Հերակլեսը բռնաբարեց, եւ ի նշան պղծութեան, ասում է, մատանի թողեց նրա մօտ ու Հեռացաւ: Իսկ Աւգէին յղիանալով, ծնեց Տելեփոսին, որն իր անունը ստացաւ իր Հետ պատահածից: Հայրն իմանալով պղծութեան մասին, խիստ զայրացաւ: Եւ գրում են, թէ Տելեփոսին նա անապատը՝ զցեց, եւ այնտեղ եղնիկը նրան կուրծք տուեց: Իսկ Աւգէին ցանկացաւ սպանել՝ ծովանդուհը զցելով: Այն ժամանակ Հերակլեսը ճանապարհորդելիս իբր մատանուց ճանաչեց իր գործած պղծութիւնը եւ դրանից յետոյ իրենից ծնուած մանկանը բարձրացրեց, իսկ Աւգէին փրկեց մահուան վտանգից: Պատմում են նաեւ, որ Ապոլլոնի դրամամբ Տելթրասը կնութեան առաւ նրանից Աւգէին, իսկ Տելեփոսին իր որդին դարձրեց»:

III.4. «Եղծ գՄեղեայ» (Պիտ. էջ 68).

«ա. Եթէ Հնարաւոր լինէր մրցանակի արժանանալ կամ էլ Համընդհանուր գովասանքով փառաբանուել սուտ խօսքերի համար, բոլորին կը գերազանցէր Եւրիպիդէս ողբերգակը, որն գոռոզանալով ստեղծել է մեծ թուով առասպելներ պատմող գրուածքներ, աւելի շատ, քան բանաստեղծների յոյլից շատերը:

բ. Սակայն ստախօսութեան դազաթնակէտին է Հասնում նա յատկապէս Մեղէայի մասին պատմութեան մէջ: Ասում է, որ նա, նաւով սկիւթների երկրից ոմն Յաստի Հետեւից եկել էր Թեսսալիա մտադրուելով դաւադրաբար սպանել այդ երկրին տիրող թագաւորին, Համոզեց նրա դուստրերին, նշելով Հօր մեծ Հասակն ու այն, որ նա արու գաւակ չունի, ասելով. «ուրեմն, եթէ կամենում եք, ես կարող եմ ցոյց տալ ձեզ նրան երիտասարդացած Հասակով ու նորոգուած»: Եւ պատմում է, որ այդ ասելով, տեղնուտեղը օրինակով բացայայտեց նրանց գործի Հանգամանքները. վերցնելով մի արու ոչխար, մաս-մաս արեց ու լցրեց կաթսայի մէջ եւ տակից կրակ վառեց, եւ եռալուց կաթսայի մէջ խլրտացող ոչխարին ցոյց տուեց իբր կենդանի: Այսպէս խաբելով՝ կտրատեց Պելիասին, եւ ասաց. «Նա կաթսայի մէջ էր», եւ ուրիշ ոչինչ»:

Վերջաբան (Պիտ. էջ 247-248).

«Մովսէս Քերթոյի՝ պէտքի մասին գրուածքի Հեղինակի յորդորական, խրատական խօսք իր շակերտ ոմն Թէոդորոսին, թէ ինչպէս ջանասէր վարժութիւններով խորամուկ լինել ճարտասանական արուեստի Հատուկութիւնների մէջ:

Այստեղից վեր ճախրելով՝ գեղեցիկ պարով յարիր արուեստների ճեմարանում օրհներգեր երգող երջանիկ փառաւորների Հոյլին: Եւ արուեստով ու պերճաբան խելամտութեամբ Հետորաբանելով նրանում, իմաստութեամբ զբաղուող կաճառի կողմից յատկապէս կը դրուատուեն վերամբարձ ճառերից Համար, իսկ լինելով ընթերցասէր ու կրթուած՝ մրցոյթներում բանավիճողների Հանդիպելիս, խելացի խօսքերով կը լռեցնեն խօսքով պարծեցողներին: Հասնելով վարդապետական աստիճանի, Հանդէսներ եւ ղեկավարելու, եւ, տօնասէր անձանց բարեպաշտ ջանքերի շնորհիւ, Հանդիսութիւններ եւ վարելու գովաբանութիւններով:

Այդ բազմամարդ Հաւաքներում գովաբանուելու եւ երանելի ձայներով ողջ քահանայական ու ազատների դասի կողմից: Դատարանում էլ ժառանգելու եւ նախագահողների պատիւը՝ Հետազօտուող խնդիրը գրուած օրէնքների Համաձայն գննելու համար: Նոյնպիսի փառահեղ Հիացմունքով պարծանք կը լինես ազգակիցներից Համար, բաղձանքի առարկայ՝ արուեստասէր պատանիների Համար՝ ամէնուր գիտակի Համբաւ ու Հոչակ վայելելով:

Սա դպրոցի նախադուռն է ու բոլոր ուշիմ պատանիների Համար Հանդիսաւոր ճարտասանութեամբ զբաղուելու ասպարէզը: Անխոնջ պարսպակով նրանում, Հետեւելով քո ուսուցիչ Մովսէսին՝ դու կը պսակես քեզ Հողիդ զարդարող գեղեցկասաղարթ պսակով, ո՛վ Թէոդորոս: Ես՝ Մովսէսս, քեզ՝ Թէոդորոսին, առաւելած ամենաճարտար առակելով՝ դպրոցում յորինուած ամենաճարտար առակելով՝ դպրոցում յորինուած ամենաճարտար առակելով մեզ: Եւ, այս կողմ ուղղուելով, դու երջանիկ կը լինես: Վեհերից վեհի պատգամաւոր ձայնը տեղեկացրեց թռչունների տասնմէկ երամանակին՝ արագ ժամանել նշանակուած օրը. «ով ձեզանից ընդհանուր Հաւաքի ժամանակ ամենագեղեցիկն ու վայելչատեսը լինի, թագի կ'արժանանայ»: Եւ թեւածելով՝ փետրաւորների տարբեր տեսակները երամ կազմեցին ըստ սեռերի ու շտապեցին թռչել Հասնել լողանալու վայրերը. իջնելով յորդ ու վճիտ աղբիւրների մեղմ Հոսող վտակների մօտ, եւ ուրախանալով բարիքներով լի վայրերով, երամ-երամ խմբուեցին: Եւ նրանց Հաւաքը՝ միակամ ու միօրինակ, իւրաքանչիւրն իր անձը զարդարելու համար յարդարելով անհաւասար փետուրները, մեծամտաբար յոյս էր փայփայում ստանալ պատուաւոր պարգեւը: Այդ ժամանակ թուխ գունաւորումով մի թռչուն խորամանկօրէն Հաւաքեց ուրիշների փետուրներն ու, կցելով դրանք իր սեւ գոյնի յանդերձանքին, բազմազան թռչունների մէջ փայլեց՝ բոլորից Հրաշագեղ երեւալով, աչքի ընկնելով ընդհանուր մէջ երկնաբան պաճուճանքով եւ սքանչելի ու պարծանքի արժանի զարդերով: Հա-

լաքուածները ողջ բազմութիւնը, երանութեան ձայն արձակելով, նրա ստացուածքին միանգամայն արժանի արքայական պատիւ պարգեւեց նրան: Իսկ խորամանկ գիշերասեր թռչունը, որ մօտ էր գտնուում փառաբանողին, քննախոյզ խոհեմութեամբ ճանաչեց իր սեփական գոյնը: Իսկոյն բռնեց դուրս քաշեց իր վրայ եղածներին նման փետուրները եւ, բացայայտելով իր տոհմակցի սովորութիւնը, մերկացրեց զարդարուածի սնապարծ ամբարտաւանութիւնը: Նրան հետեւելով՝ միւսներն էլ, մօտիկից զննելով ու ճանաչելով սեփական գունաւորումը, իւրաքանչիւրը հանեց իր փետուրները: Հնչեց արտաքին զարդարանքից զրկուածին այսպանող ու ծաղրող մի երգ, եւ իր պաճուճանքից մերկացած, նա բազմաթիւ թռչունների ծաղրի առարկայ դարձաւ»:

## DIALECTSYNTAX— ON THE IMPORTANCE OF SYNTACTIC CRITERIA IN MULTI-FEATURE CLASSIFICATION OF ARMENIAN DIALECTS

Jasmine Dum-Tragut

Languages differ from each other in respect to certain linguistic features, and likewise dialects. These distinguishing, contrastive features comprise the phonological and lexical inventory of a natural language as well as the structural, i.e. the morphological and syntactic characteristics. In modern linguistics, the structural features of languages have been stressed in comparative studies, and modern typology and language universal research are mainly based on such features. Typology as practiced since the early 90s investigates differences and hence also similarities between languages. In modern areal linguistics these typological features have been used to classify languages according to their structural attributes and to define linguistic areas. Shared so-called grammatical features are often an evidence for close language contact, interferences and parallel linguistics developments.

In the history of linguistic typology two methodological issues were to be addressed, the basis of the cross-linguistic comparison and the language sample. One of the first steps was the so-called morphological typology (Schleicher), which used the morphological structure of words as basis for a classification. But since languages generally do NOT belong to a single holistic structural type, but rather to a type that consists of various structural parameters, they may contain features representing two or more types. Beginning with the implicational universals of Greenberg in the 60s the attention of typology has turned to selected syntactic features, especially regarding word-order and agreement patterns. Even

in typology, until the 60s the syntax of natural languages has been a relatively neglected area of study. The main problem was simply not the same knowledge and the same data were available about syntax and sounds. It was easier to study sounds than syntax.

Languages differ in certain syntactic features, and likewise dialects.

In dialectology, however, syntax is represented only by way of exception. Dialectology was primarily influenced and determined by the methods of historical linguistics in the 19th and early 20th centuries: the analysis of linguistic data (in dialectology of course, speech utterances) regarding their phonetic, morphological and lexical features (RUOFF 1982, 239). Theoretical demands for the inclusion of syntactic features which have been formulated by early dialectologists have often not been considered either in practical diatopic or syntopic studies: "It is at least desirable to include syntax, suprasegmental and stylistic phenomena into dialectological studies" (WEGENER 1879).

It is phonetics which was regarded as the basis of dialectology, and it is still the main criteria for the classification of dialects.

Generally, in the early stages of historical linguistics, in dialectology and in typology only those features were vastly defined and described which were apparent to linguists. In dialectology, the most apparent features were those which are on the surface of the dialect, the phonetic inventory, the phonetic realization of lexemes in comparison with the standardized and written language and the specific lexicon. Morphological features were often